ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ԱՇՈՏ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.
# ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ
## (թագադրության թվականը և գահակալության տարիները)

ԵՊՀ հրատարակչություն
Երևան
2014

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ե 381

*Հրատարակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ*

Խմբագիր՝ պրոֆեսոր **Պետրոս Հ. Հովհաննիսյան**

Ե 381 **Եղիազարյան Արման**

Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (թագադրության թվականը և գահակալության տարիները) / Արման Եղիազարյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014.-80 էջ:

*Մենագրությունը նվիրված է Հայոց պատմության այնպիսի կարևոր իրադարձությունների, ինչպիսիք են Բագրատունյաց թագավորության հիմնադրումը և Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունու գահակալությունը: Ի մի են բերված այդ իրադարձությունների վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունները ու հետազոտողների տեսակետները: Մանրակրկիտ քննության են առնվել Բագրատունի առաջին թագավորի գահ բարձրանալու թվականի, գահակալության տարիների քանակի և հարակից մի շարք հարցեր:*

*Հիմնահարցերի քննությունը և վերջինիս արդյունքները կարող են օգտակար լինել հայագետներին, բյուզանդագետներին և կովկասագետներին, ինչպես նաև ընթերցող լայն հանրությանը:*

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1850-9

© ԵՊՀ հրատ., 2014
© Ա. Եղիազարյան, 2014

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արշակունյաց թագավորության կործանումից հետո (428 թ.) ավելի քան չորսուկես դար հայ ժողովուրդը զրկված էր քաղաքական անկախությունից: Այդ ընթացքում Հայոց թագավորությունը վերականգնելու որոշ փորձեր կատարվել են, սակայն հաջողություն չեն ունեցել: Եվ միայն IX դ. վերջին տասնամյակների ընթացքում Բագրատունիների վարած խորամիտ քաղաքականության շնորհիվ վերջապես հնարավոր եղավ վերականգնել Հայոց թագավորությունը:

Աշոտ Բագրատունու գլխավորությամբ Հայոց թագավորության վերահաստատումն այդ պատմաշրջանի հայկական իրականության ամենակարևոր և հետագայում մեծապես արժևորված իրադարձություններից մեկն է: Այդ իսկ պատճառով այն իր վրա է սևեռել թե՛ ժամանակակից, թե՛ հետագա շրջանի բազմաթիվ հեղինակների ուշադրությունը:

Աշոտ Ա-ն, բացի Հայոց թագավորության վերականգնման գործում ունեցած հսկա ներդրումից, կատարել է նաև այլ մեծագործություններ, նրա օրոք Հայաստանը ծաղկում է ապրել, իսկ հայ ժողովուրդը բարգավաճել: Այդ ամենի պատճառով ժամանակակիցների կողմից նրան տրվել է «Մեծ» պատվանունը[1]:

Պատմագիտության մեջ Բագրատունիների թագավորության սկզբնավորման թվականի ճշգրտումն առաջացրել է յուրատեսակ մի «բանավեճ»՝ հիմնված աղբյուրների հայտնած տարաբնույթ տեղեկությունների վրա: Այդ «բանավեճը» մինչև այժմ հանգուցալուծված չէ: Ուսումնասիրողները Հայոց թագավորության վերականգնումը թվագրում են 884, 885, 886 և 887 թվականներով:

Ճշգրտված չէ նաև Աշոտ Ա թագավորի գահակալության տարիների քանակը: Սկզբնաղբյուրները Բագրատունի առաջին թագավորին վերագրում են գահակալության 4, 5 և 7 տարիները: Այս խնդիրն ուսումնասիրողների տեսադաշտից հաճախ դուրս է մնացել, թեև համա-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 418, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 85:

պատասխան ճշգրտումը կարող էր զգալիորեն դյուրացնել Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու թվականի բացահայտումը և լույս սփռել մի շարք այլ կարևոր հարցերի վրա:

Աշոտ Բագրատունու՝ թագավոր հռչակվելու թվականի ճշգրտման համար կարևոր նշանակություն ունեն ժամանակակից պատմիչ և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունները: Պատմիչը, ցավոք, որևէ ժամանակագրություն չի ներկայացնում, որի հետևանքով, չնայած կարևոր պատումներին ու տեղեկություններին, մենք ստիպված ենք Աշոտ Ա-ի շրջանի վերաբերյալ ժամանակագրական ցուցումներ փնտրել այլ պատմիչների երկերում: Վերջիններս, բացառությամբ Թովմա Արծրունու, իրենց աշխատությունները գրել են Աշոտ Ա թագավորից տասնյակ տարիներ և նույնիսկ դարեր անց, որի հետևանքով իրենք էլ վերածվել են զուտ բանաքաղների կամ հետազոտողների՝ փորձելով ներկայացնել սեփական հաշվումներից ստացված արդյունքները:

Պահպանվել են նաև բազմաթիվ հիշատակարաններ և ժամանակագրություններ, որոնք հաղորդում են արժեքավոր տեղեկություններ՝ հնարավորություն տալով կատարելու կարևոր բացահայտումներ Աշոտ Ա-ի գահ բարձրանալու և թագավորության շրջանի վերաբերյալ:

Սույն աշխատության մեջ փորձեր է կատարվել՝ ի մի բերելու ինչպես Աշոտ Բագրատունու թագաղրության թվականի վերաբերյալ սկզբնաղբյուրների բոլոր տեղեկությունները, այնպես էլ հարցին այս կամ այն կերպ անդրադարձած բոլոր հետազոտողների տեսակետները: Ի վերջո, փաստերի և կարծիքների համադիր վերլուծությամբ քննության են առնվել Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու թվականի, ինչպես նաև նրա գահակալության տարիների քանակի հարցերը:

Հետազոտության ընթացքում մեծ տեղ է հատկացվել նաև Աշոտ Ա թագավորի իշխանության և թագավորության շրջանի իրադարձությունների բացահայտմանը: Քննության են առնվել մի շարք կարևոր իրողություններ և իրադարձություններ, որոնց վերաբերյալ նախկինում չի խոսվել ու գրվել:

Հնարավոր է, որ հետազոտողները հետագայում դարձյալ ու դարձյալ անդրադառնան արծարծված խնդիրներին և հայտնեն բազ-

մապիսի կարծիքներ: Եվ Աշոտ Բագրատունու կողմից Հայոց թագավորության վերականգնման թվականի վերաբերյալ «բանավեճը» կշարունակվի, քանի դեռ չի հայտնաբերվել Բագրատունի առաջին գահակալի և նրա գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ պարունակող Շապուհ Բագրատունու «Պատմութիւն»-ը[1]:

Հուսանք, որ մի գեղեցիկ օր այն կգտնվի:

[1] Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց»,-«Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 358, 426, 439, 445: Տե՛ս նաև **Պ. Հ. Հովհաննիսյան**, Անանուն Զրուցագիրը եւ իր Պատմութիւնը,-«Մատենագիրք Հայոց», Թ. հատոր, Թ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1001-1005:

## Գլուխ Ա
## ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշոտ Բագրատունու իշխանության և թագավորության շրջանի վերաբերյալ քիչ թե շատ մանրամասն տեղեկություններ են պահպանվել ժամանակակից և հետագա պատմիչների աշխատություններում, ժամանակագրություններում և հիշատակարաններում:

Աշոտ Բագրատունու ժամանակաշրջանի վերաբերյալ կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկը՝ Շապուհ Բագրատունու «Պատմությունը» մեզ չի հասել: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից՝ այնտեղ նկարագրված են եղել Աշոտ Բագրատունու օրոք տեղի ունեցած իրադարձությունները, ըստ որում՝ այնքան մանրամասն ու ճշմարտացի, որ պատմիչը հարկ չի համարել դարձյալ նկարագրելու դրանք, այլ բավարարվել է կարճ տեղեկություններով և Շապուհի մասին հիշատակելով[1]:

Հայտնի է, որ Շապուհ Բագրատունու պատմական երկն օգտագործել են Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և Վարդան վարդապետը[2]: Ուստի, եթե Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու տարեթվի առումով նշված մատենագիրները հիմք են ընդունում Շապուհ Բագրատունու տեղեկությունները[3], ապա դա մեզ հնարավորություն կտա զգալիորեն մոտենալու Հայոց իշխանաց իշխանի՝ թագավոր հռչակվելու տարեթվի ճշգրտմանը: Սակայն, այդ պարագայում ամեն ինչ չէ, որ միանշանակ է: Ինչպես կտեսնենք, Ասողիկը և Վարդան վարդապետն այդ իրադարձությունը թվագրում են հայոց 336

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 439, 445:

[2] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 285, 309, 451, 463, 477, 485:

[3] Հարկ է նշել, որ Անանուն Զրուցագրի աշխատության վերջին հրատարակության մեջ փորձ է կատարվել ի մի բերելու Շապուհ Բագրատունու աշխատության այն պատառիկները, որոնք պահպանվել են տարբեր պատմիչների երկերում: Հավաքագրված նյութերից և ոչ մեկը չի վերաբերում Աշոտ Բագրատունու՝ գահ բարձրանալու իրադարձությանը: Տե՛ս **Անանուն Զրուցագիր**՝ կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանոթագրութիւնները Վ. Առաքելեանի, Ե., 2011, էջ 186-224:

(887/888), իսկ Սամվել Անեցին ու Կիրակոս Գանձակեցին՝ հայոց 334 (885/886) թվականով: Նշված թվագրումներին հերթականությամբ ու մանրամասնորեն կանդրադառնանք ստորև:

Աշոտ Բագրատունու դարաշրջանի տարբեր իրադարձությունների բացահայտման և թվագրման տեսանկյունից մեծ կարևորություն են ներկայացնում հատկապես ժամանակակից պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու տեղեկությունները: Բայց նրանք լռում են Աշոտ Ա-ի գահակալության սկզբնավորման թվականի մասին:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Հայոց Սմբատ սպարապետն Արաբական խալիֆայության զորավար Բուղայի հետ մեկնեց խալիֆայի մոտ, որից հետո նրա որդի Աշոտ Բագրատունին դարձավ սպարապետ[1]: Աշոտը շատ արագ մեծ հեղինակություն ձեռք բերեց ոչ միայն Հայաստանում, այլև վերջինս ու այսրկովկասյան երկրներն ընդգրկող՝ Խալիֆայության Արմինիա վարչական շրջանում, որի հետևանքով Արմինիայի արաբ կառավարիչ (ոստիկան) Ալի իբն ալ-Յահիյա ալ-Արմանին (862-863[2]) խալիֆայի հրամանով 862 թ. նրան կարգեց իշխանաց իշխան[3]:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Աշոտ Բագրատունին «ընտրեալ զայր մի պատուական յընտանեաց տանն կաթողիկոսարանին, Գէորգ անուն՝ որ էր ի գիւղաքաղաքէն Գառնւոյ, հրամայէ ձեռնադրել զնա յառաջնորդութիւն տանս Թորգոմայ»[4]: Դա 876 թվականն էր, քանի որ Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը աթոռակալել է 876-897 թթ.[5]: Ըստ որում՝ Հովհաննես Դրասխանակերտցին Աշոտին

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 437-439:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը,-«Պատմաբանասիրական հանդես», 1977, թիվ 1, էջ 127:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 440:

[4] Նույն տեղում, էջ 442:

[5] Գևորգ Գառնեցու ձեռնադրությունը կատարվել է, ինչպես հավաստում է Ասողիկը, «յաւուրս տօնի Թլփատութեան տեառն» (տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն Տիեզերական,-«Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Ե., 2011, էջ 709-710): Դա Աստվածահայտնության ութօրյակն է, որն ըստ Մ. Օրմանյանի՝ համապատասխանել է 877 թ. հունվարի 13-ին կամ Հայոց տոմարով՝ ահեկան ամսի 28-ին (տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Կոստանդ-

շարունակում է կոչել իշխանաց իշխան[1], թեև, ինչպես կտեսնենք, նույն շրջանի վերաբերյալ պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ Աշոտ Բագրատունին արդեն թագավոր էր հռչակվել հայ իշխանների կողմից:

Այնուհետև պատմիչն անմիջապես անցնում է Աշոտ Բագրատունու գովերգմանը, նկարագրում հայոց իշխանների նախաձեռնությունը՝ նրան թագավոր հռչկելու վերաբերյալ և խալիֆայից թագ ստանալը ոստիկան Ծեխի որդի Հիսեի միջոցով[2]: Հ. Նալբանդյանն այս ոստիկանին նույնացնում է Իսհակ իբն Կունդաջիկին, որը պաշտոնավարել է 879 թ.[3], իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը՝ ոստիկան Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանիին, որը կառավարել է, դատելով հետազոտողի նշած ժամանակագրությունից, մոտ 882-884 թթ.[4]: Այն, որ ճիշտ է երկրորդ տեսակետը, բխում է հենց պատմիչի ներկայացրած ոստիկանի անունից, սակայն, կարևոր է հատկապես այն, որ ըստ, Հովհաննես Դրասխանակերտցու, Աշոտին թագ է բերել այդ ոստիկանը:

Ոստիկանի կողմից թագը բերելուց հետո տեղի է ունենում թագադրության հանդեսը[5]:

Թագավոր դառնալուց հետո Աշոտ Ա-ն կատարում է մի շարք արշավանքներ: Նրան հպատակվում է նաև աբխազաց (եգերաց) թագավորը: Այնուհետև Բյուզանդիայի Բարսեղ (Վասիլ) Ա կայսրը (867-886) դաշինք է կնքում Աշոտ թագավորի հետ[6]: Միևնույն ժամանակ, Վասպուրականի իշխան Գրիգոր Դերենիկ Արծրունին ազատագրում է Հերի և Զարևանդի կողմերը, սակայն սպանվում է տեղի արաբների

---

նուպոլիս, 1913, էջ 991-992): Առավել հավանական է Ղ. Ալիշանի տեսակետը: Մեծ հայագետը կարծում է, որ Գևորգ Գառնեցին կաթողիկոսական գահին է բազմել 876 թ. հունվարին (տե՛ս **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 475):

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 442:

[2] Նույն տեղում, էջ 443:

[3] Տե՛ս **Հ. Նալբանդյան**, Արաբացի ոստիկանները Հայաստանում,-«Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1956, թիվ 8, էջ 123-124:

[4] Տե՛ս **А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, Е., 1977, էջ 285:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 443:

[6] Նույն տեղում, էջ 444:

կողմից: Նրանից հետո իշխում է Աշոտը՝ նրա որդին և Աշոտ թագավորի թոռը[1]:

Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից կարելի է բխեցնել հետևյալ իրողությունները.

ա. Աշոտ Բագրատունուն թագ է բերել ոստիկան Ծեխի որդի Հիսեն,

բ. թագը բերելուց հետո կազմակերպել են թագադրության հանդեսը,

գ. Աշոտը թագավոր է հռչակվել Բյուզանդիայի կայսր Բարսեղ Ա-ի և Վասպուրականի իշխան Գրիգոր Դերենիկ Արծրունու կենդանության օրոք,

դ. թագադրությունից հետո Աշոտ Ա-ն տիրել է շրջակա երկրներին և հպատակեցրել աքխազաց թագավորին: Այդ իրադարձությունները տեղի են ունեցել 888 թվականին[2]:

Չպետք է մոռանալ, սակայն, որ պատմիչը, չնայած ժամանակակից է վերոհիշյալ իրադարձություններին, իր աշխատությունը գրել է դրանցից շուրջ 40 տարի անց[3], ուստի կարող էր շփոթել դեպքերի ժամանակագրական հերթականությունը: Մյուս կողմից, արձանագրենք այն, որ Հովհաննես Դրասխանակերտցին, անկախ այն բանից, թե որ թվականին է դնում Աշոտ Բագրատունու թագադրությունը, փաստորեն, վերջինիցս անմիջապես հետո ներկայացնում է արդեն 888 թ. տեղի ունեցած իրադարձությունները, որը կարևոր հետևությունների տեղիք է տալիս:

Խնդրո առարկա հիմնահարցերի քննության համար մեծ կարևորություն ունեն այդ իրադարձությունների մեկ այլ ժամանակակից պատմիչի՝ Թովմա Արծրունու տեղեկությունները: Նա հաղորդում է, որ Աշոտ Բագրատունին իշխել է «Ե (5) ամ յիշխանական ճոխութեան,

---

[1] Նույն տեղում, էջ 444-445:

[2] Տե՛ս **Ս. Երեմյան**, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները,-«Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Ե., 1947, թիվ 2, էջ 110-111, **Ա. Եղիազարեան**, Հայ-ափխազական պատերազմները Թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջքի կցւրոպադատութիւնը,-«Բազմավէպ», Վենետիկ, Ս. Ղազար, 2009, էջ 187-192:

[3] Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», բնագիրը՝ Մ. Էմինի, Ե., 1996, էջ 368 (ծանոթագրություններ):

ԻԵ (25) ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ (4) ամ ի թագակապ շքեղութեանն. եւ մեռաւ ՅԼԹ (339/890 թ. ապրիլ-891 թ. ապրիլ) թուականութեան Հայոց և ի ԺԵ (15) ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի»[1]:

Ստորև կտեսնենք, որ հետազոտողներից ոմանք մեծ տեղ են հատկացնում Թովմա Արծրունու հաղորդմանը՝ դրան տալով այս կամ այն մեկնաբանությունը: Եթե հետհաշվարկ կատարենք պատմիչի կողմից նշվող՝ Աշոտի մահվան թվականից, ապա նրա թագավորության սկիզբը կլինի 886/887 թ., իշխանաց իշխան դառնալու առաջին տարին՝ 861/862 թ., իսկ իշխան դառնալու առաջին տարին՝ 856/857 թ.: 876 թ. կաթողիկոս դարձած Գևորգ Գառնեցու հայրապետության 15-րդ տարին 891 թվականն է, որը համապատասխանում է Աշոտ Ա-ի մահվան թվականի հետ կապված հիշատակությանը: Պատմիչի տեղեկություններն աչքի են ընկնում ժամանակագրական կուռ կառուցվածքով, ուստի՝ դրանց քննությանը կանդրադառնանք ավելի ուշ՝ Աշոտ Ա-ի գահ բարձրանալու թվականը և գահակալության տարիները ճշգրտելիս:

Աշոտ Բագրատունու իշխանության և թագավորության շրջանի վերաբերյալ ժամանակագրական կարևոր տեղեկություններ է պահպանել Սամվել Անեցին: Ստորև հարկ ենք համարում մանրամասնորեն անդրադառնալու պատմիչի տեղեկություններին, քանի որ նա բացի նկարագրություններից ներկայացնում է նաև մանրամասն աղյուսակներ, որտեղ համադրաբար նշված են տարբեր իրադարձությունների և տարբեր աշխարհիկ ու հոգևոր տերերի գահակալության թվականների խաչաձևումները: Այս առումով, Սամվել Անեցուն կարելի է համարել առաջին հեղինակներից մեկը, որը քննության է առել Աշոտ Բագրատունու գործունեության շրջանի ժամանակագրությունը:

Ընդունված է համարել, որ Սամվել Անեցին հետևել է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործող թվականից 2 տարի առաջ (այսպես կոչված քրիստոնեական հայկական կամ փրկչական թվականության համաձայն), ուստի Սամվել Անեցու աշխատության մեջ քրիստոնեական և հայկական թվա-

[1] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 356:

կանների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է: Ըստ այդմ՝ Սամվել Անեցու ներկայացրած իրադարձությունների իրական թվականները ճշտելու համար անհրաժեշտ է հայկական թվականին գումարել 551 և կամ քրիստոնեական թվականից հանել 2 տարի[1]: Սամվել Անեցին այս հարցում հետևել է իր ուսուցիչ Հովհաննես Սարկավագին, որը գրում է, թե «ի ծննդենէն Քրիստոսի ի հայ թուականն՝ ՇԾԳ (553)»[2]: Ուստի, ըստ Սամվել Անեցու՝ փրկչական ՇԾԴ (554) թվականին համապատասխանում է հայոց Ա (1) թվականը[3]:

Սամվել Անեցու տեղեկությունների կարևոր արժեքն այն է, որ հստակեցված են Աշոտ արքայի, Զաքարիա Ա Զագեցի և Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսների գահակալության առաջին տարիները: Խնդիրն այն է, որ պատմագիտական գրականության մեջ երբեմն դժվարություն է առաջանում ճշգրտելու պատմական տարբեր անհատականությունների իշխանության առաջին տարիները, որի հետևանքով զգալիորեն դժվարանում է նաև այն իրադարձությունների հստակ թվագրումը, որոնք, ըստ սկզբնաղբյուրների, տեղի են ունեցել նրանց գահակալության այս կամ այն տարում: Պատմիչն ունի տարբեր իշխողների գահակալության առաջին թվականը որոշելու սեփական սկզբունքը: Նա, որպես կանոն, նրանց գահակալության առաջին տարին տեղադրում է գահ բարձրանալու հաջորդ տարում: Նույն սկզբունքով հայոց մեծ թվականի սկզբնավորումը դրված է 553 թ., իսկ դրա առաջին տարին՝ 554 թվականը:

Կ. Մաթևոսյանը գրում է, որ Սամվել Անեցու առաջին հրատարակության մեջ Աշոտ Ա-ի թագավորության սկզբնավորման վերաբերյալ թվականը նշված է միայն փրկչական թվականով, այն է՝ ՊՁԷ (887): Սակայն Սամվել Անեցու այլ ձեռագրերում Աշոտի գահ բարձրանալը թվագրված է հայկական ՅԼԴ (334/885) թվականով: Ըստ ու-

[1] Տե՛ս **Լ. Խաչիկյան**, Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները,-«Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1949, թիվ 2, էջ 82:

[2] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դարեր)», հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 23:

[3] Տե՛ս **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, առաջաբանը՝ Կ. Մաթեւոսեանի, Ե., 2011, էջ 13, ծանոթ. 44:

սումնասիրողի՝ անկախ այն բանից, որ նա հայոց թվականի սկզբնավորումը դնում է 553 թ., գիտի, որ Աշոտը թագադրվել է հայոց 334 կամ 885 թվականին[1]:

Ըստ Սամվել Անեցու՝ Ալի Արմանի ոստիկանը խալիֆայի հրամանով «յետ սպարապետութեանն՝ իշխանաց իշխան զնա Հայոց կացուցանէր, զամս Լ. (30): Եւ ապա յաղագս առաւել լաւութեան, թագաւորական պսակաւն ճոխաբար թագ կապեալ յերկոցունց թագաւորացն Իսմայէլացւոցն եւ Յունականէն, ամս Ե. (5)»[2]: Այնուհետև ներկայացվող աղյուսակում որպես Աշոտի՝ իշխանաց իշխան դառնալու թվական նշված են փրկչական ՊՀԴ (874) և հայոց ՅԻԱ (321/872) թվականները, որոնք համապատասխանում են Աշոտի՝ իշխան կարգվելու 19-րդ և Զաքարիա Ա Ձագեցի կաթողիկոսի հայրապետության 20-րդ տարուն[3]:

Պատմիչի ներկայացրած աղյուսակի «Մեծաշուք բախտի պատահեալն Աշոտ որդի Սմպատայ ամենայն նախնեացն գեր ի վերոյ եղեալ» տողով սյունյակի դիմաց նշված է, որ, Քրիստոսի ծննդյան ՊԾԶ (856) և հայոց ՅԳ (303/854) թվականից սկսած, որը, ի դեպ, Աշոտի իշխանության առաջին տարին էր, նա իշխել է 36 տարի: Միևնույն ժամանակ, ըստ պատմիչի, այդ իրադարձությունը տեղի է ունեցել Զաքարիա Ա Ձագեցի կաթողիկոսի հայրապետության, որի սկզբնավորումը, ըստ պատմիչի, հայոց ՅԱ (301/852) թվականն է ու փրկչական ՊԾԴ թվականը (854), երկրորդ տարում, ըստ որում՝ կաթողիկոսի գահակալության առաջին տարին նա դնում է հայոց ՅԲ (302/853) և փրկչական ՊԾԵ (855) թվականին: Աշոտ Բագրատունու իշխանության առաջին տարին (փրկչական թվականով՝ ՊԾԶ/856) լրանում է 855 թ.: Կաթողիկոսը գահակալել է 22 տարի[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 13, ծանոթ. 45:

[2] Նույն տեղում, էջ 113: Աշոտ Բագրատունու թագադրության վերաբերյալ նմանօրինակ հիշատակություն է պահպանվել նաև «Յայսմաւուրքում». «երկրքին թագաւորքն առաքեցին առ նա թագ արքայական և պսակեցին թագաւոր Հայոց» («Յայսմաւուրք», ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի, ի Կոստանդնուպօլիս, 1834, էջ 234):

[3] Տե՛ս **Սամուէլ Անեցի**, էջ 114:

[4] Նույն տեղում:

Պատմիչի տեղեկություններով՝ Արշակունյաց թագավորության վերացումից հետո մինչև Բագրատունյաց թագավորության հռչակումը անցել էր ՆԼԴ (434) տարի: Հայոց թագավորության վերականգնման թվական նշված է փրկչական ՊՁԷ-ն (887), որը միևնույն ժամանակ համապատասխանում է Աշոտի 36 տարիների իշխանության 32 տարվան, հայոց ՅԼԴ (334/885) թվականին և Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի հայրապետության 11-րդ տարվան: Կաթողիկոսի գահակալությունը պատմիչը հաշվարկում է փրկչական ՊՀԶ (876) և հայոց ՅԻԳ (323/874) թվականներից, իսկ առաջին տարի համարում հայոց ՅԻԴ (324/875) թվականը և նրան վերագրում 22 տարվա հայրապետություն՝ սկսած Աշոտի իշխանության 22-րդ տարուց: Այս սյունյակում Աշոտի իշխանաց իշխան լինելու տարիների քանակը 32-ն է՝ այն հաշվարկով, որ նա թագավոր է դարձել իր իշխանության 32-րդ տարում: Աշոտի մահը տեղի է ունեցել իշխանության 36-րդ տարում և թվագրված է փրկչական ՊՂԱ (891) ու հայոց ՅԼԸ (338/889) թվականով, Բյուզանդիայի Լևոն Զ կայսեր (886-912) իշխանության չորրորդ ու Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի գահակալության 15-րդ տարով: Նույն թվականով թվագրված է նաև Սմբատի գահ բարձրանալը, որի առաջին տարին համապատասխանում է կաթողիկոսի գահակալության 16-րդ տարվան[1]:

Սամվել Անեցին, խոսելով հայոց թվականի սկզբնավորման մասին, դրա առաջին տարի է համարում ԾԾԴ թվականը (554), որը միևնույն ժամանակ, ըստ պատմիչի, համապատասխանում է Հուստինիանոս Ա կայսեր (527-565) գահակալության 22-րդ և Խոսրով Անուշիրվան թագավորի (531-579) գահակալության 19-րդ տարվան: Այն նույնական է նաև հայոց կաթողիկոս Մովսեսի [իրականում՝ Ներսես Բ Բագրևանդցի (548-557)] աթոռակալության չորրորդ տարվան[2]: Հուստինիանոսի գահակալության 22-րդ տարին 549/550 թվականն է, իսկ Խոսրով Ա Անուշիրվանի 19-րդ տարին՝ 550/551 թվականը: Սակայն, պատմիչը Խոսրով Անուշիրվանի գահակալության առաջին տարի համարում է 536 թվականը, իսկ Հուստինիանոսի կայսրության առաջին

[1] Նույն տեղում, էջ 115:

[2] Նույն տեղում, էջ 94:

տարի՝ 533 թվականը[1], ուստի նշված տարիների գումարման արդյունքում ստացվում է 554/555 թվականը: Նույն կերպ նա կաթողիկոսի աթոռակալության առաջին տարին համարում է 551 թվականը, ուստի չորրորդ տարին ստացվում է 554 թ.: Կարելի է տեսնել, որ վերոհիշյալ հաշվարկներում թվականները հարմարեցված են միմյանց:

Եթե փորձենք վերլուծել ժամանակագրական այս բարդ համակարգը, կարող ենք արձանագրել հետևյալը: Աշոտի իշխանության առաջին տարին 856 թվականն է (և ոչ թե 854 թվականը հայոց թվականով, երբ դեռ իշխում էր Աշոտի հայր Սմբատը), որից եթե հաշվարկենք նրա ընդհանուր իշխանության տարիները մինչև մահը, կհասնենք 891 թվականը: Աշոտի գահ բարձրանալը տեղի է ունեցել նրա իշխանության 32-րդ տարում, որը 887 թվականն է՝ համապատասխան հայոց 334 (885) թվականին: Միևնույն ժամանակ այն տեղի է ունեցել Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի գահակալության 11-րդ տարում, ըստ որում՝ հայրապետի աթոռակալության առաջին տարին հայոց 324 թվականն էր ու Աշոտի իշխանության 22-րդ տարին, այսինքն՝ 876 թվականը: 11-րդ տարին ստացվում է 887 թվականը: Մյուս կողմից, Աշոտի մահը վրա է հասել նրա իշխանության 36-րդ տարում՝ 891 թ., որը, ըստ Սամվել Անեցու, համապատասխանում է հայոց 338 (889) ու փրկչական 891 թվականներին, Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի հայրապետության 15-րդ տարուն (891) և Բյուզանդիայի Լևոն Զ կայսեր գահակալության 4-րդ տարուն (890/891): Նույն թվականին գահ բարձրացած Սմբատի թագավորության առաջին տարին, սակայն, համապատասխանում է կաթողիկոսի գահակալության 16-րդ տարուն, այսինքն՝ հաջորդ թվականին:

Սամվել Անեցու ժամանակագրական համակարգը խնդրո առարկա հարցի վերաբերյալ պարզապես անթերի է, միմյանց հարմարեցված են գրեթե բոլոր թվերը: Միայն հարկ է պարզաբանել մի կարևոր խնդիր: Ակնհայտ է, որ պատմիչի նշած որոշ հայկական թվականներին եթե գումարում ենք 551, արդյունքները ստացվում են 2 տարով պակաս փրկչական թվականներից: Վերջիններս հաճախ ոչ թե 2 տարով գերազանցում են իրական թվականներին, այլ համընկնում

[1] Նույն տեղում, էջ 92:

դրանց: Բավական է մեջ բերել դրանցից որոշները: Այն իրողությանը, որ Աշոտ Ա-ն վախճանվել է 891 թ. և ոչ թե 889 թ., մենք դեռ կանդրադառնանք: Սամվել Անեցու կողմից նշված փրկչական թվականներն այդ առումով ամբողջությամբ համապատասխանում են իրականությանը: Աշոտ Բագրատունին վախճանվել է 891 թ. (ՊԴԱ)՝ իշխելով ընդհանուր առմամբ 36 տարի (մահացել է իր իշխանության 36-րդ տարում): Նույն թվականն է մատնանշում նաև Բյուզանդիայի կայսր Լևոն Զ-ի 4-րդ տարին Աշոտի մահանալու վերաբերյալ իրողությունը, ինչպես նաև նույն իրադարձության թվագրումը Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի հայրապետության 15-րդ տարով: Երկու դեպքերում էլ խոսքը 891 թ. մասին է: 891 թվականից եթե հանենք այդ 36 տարիները, կստանանք 855/856 թվականը: Աշոտը թագավոր է դարձել իր իշխանության 32-րդ տարում, որը եթե հաշվենք 855/856 թվականից, կստանանք 887 թվականը: Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը գահ է բարձրացել Աշոտի իշխանության 22-րդ տարում, այսինքն՝ 876 թ., որից հաշվելով 11-րդ տարին, երբ Աշոտը գահ բարձրացավ, կստացվի դարձյալ 887 թվականը: Այս բոլոր թվականների մեջ ունենք երկուսը, որոնք հստակ են՝ Լևոն Զ կայսեր գահակալությունը՝ 886 թ. սկսած և Աշոտ Ա-ի մահը, ինչպես կտեսնենք, 891 թվականին: Սամվել Անեցու կողմից նշված, այս իրադարձություններին վերաբերող թվականներից իրականությանը համապատասխանում են փրկչական թվականները: Իսկ մասնավորապես Աշոտի մահվան թվագրումը հայոց ՅԼԸ (338/889) թվականով պարզապես հետևանք է այն իրողության, որ պատմիչը հայոց թվականը սկսել է հաշվել 553 թվականից, ուստի նրա նշած հայոց ՅԳ (303/554) թվականին, երբ սկսվել է Աշոտի իշխանությունը, հարկ է գումարել ոչ թե 551, այլ 553 տարի: Այլապես կստացվի, թե Աշոտը սպարապետ է դարձել այն ժամանակ, երբ այդ պաշտոնը դեռևս զբաղեցնում էր նրա հայրը:

Մյուս կողմից, նշելով Բարսեղ Ա կայսեր գահակալության մասին՝ Սամվել Անեցին այն փրկչական թվականով թվագրում է 865 թ.՝ գահակալության առաջին տարին համարելով 866 թվականը: Իսկ հայոց թվականով նույն իրադարձությունը թվագրված է 312/863 թ. (գահակալության առաջին տարին՝ 313/864 թ.), որը սխալ է, քանի որ Բար-

սեղ Ա-ն իշխել է 867 թվականից: Հակառակ վիճակն է, երբ Սամվել Անեցին ներկայացնում է Լևոն Զ կայսեր գահակալության թվականները՝ փրկչական 887 (առաջին տարին՝ 888 թ.) և հայոց 334/885 (առաջին տարին՝ 335/886թ.) թվականներով[1]: Այս պարագայում ճիշտ է երկրորդ թվագրումը:

Սամվել Անեցու տեղեկությունների քննությունը, անկախ մնացյալ մանրամասնություններից, առաջացնում է մի կարևոր հարց: Եթե Աշոտ Ա-ի մահվան վերաբերյալ նրա հաղորդած թվականներից ճշգրիտ է փրկչական թվականով ներկայացվածը, ինչո՞ւ պետք է մենք Հայոց թագավորի գահակալության առաջին տարվա վերաբերյալ նրա տեղեկություններից հիմք ընդունենք ոչ թե դարձյալ փրկչական թվականով, այլ հայոց թվականով ներկայացվածը: Եթե հենվենք այն բանի վրա, որ այդ պարագայում տրամաբանորեն հենց փրկչական թվականով ներկայացվածն է ճշգրիտ, ապա Սամվել Անեցուն կարող ենք հանել այն հեղինակների ցուցակից, որոնք Աշոտ Ա-ի գահակալության սկիզբ են համարում 885 թվականը և ընդգրկել այն հեղինակների խմբում, որոնք այդ իրադարձությունը դնում են 887 թվականին:

Վերջինիս օգտին է նաև այն իրողությունը, որ Աշոտ Ա-ին վերագրելով 5 տարվա թագավորություն և նրա թագավորության առաջին տարին համարելով հայոց ՅԼԵ (335/886) թվականը՝ Սամվել Անեցին ոչ մի կերպ չէր կարող հասնել 889 թ., երբ, ըստ նրա, իբր թե մահացել է Հայոց թագավորը: 886 թվականին գումարելով թագավորության 5 տարիներ՝ նա պետք է հասներ 890 թվականին: Բայց քանի որ Աշոտ Ա-ն մահացել է 891 թ., և, այդ առումով, ճիշտ է պատմիչի կողմից նշված փրկչական թվականը, ուրեմն 5 տարով հետհաշվարկը հասցնում է 887 թ., որը և նրա կողմից որպես Աշոտ Ա-ի գահակալության սկիզբ դարձյալ ներկայացված է փրկչական թվականով:

Պատմիչների մի խումբ՝ Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և Ստեփաննոս Օրբելյանը, Աշոտ Ա-ի գահակալության սկիզբ են համարում հայոց ՅԼԴ (334) թվականը, որը 551 թվականից հաշվելու

[1] Նույն տեղում, էջ 115:

դեպքում սկսվում էր 885 թ. ապրիլին և ավարտվում 886 թ. ապրիլին: Նրանք Աշոտ Ա-ին վերագրում են 5 տարվա թագավորություն:

Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է, որ Աշոտ Բագրատունին թագադրվել է 334/885 թ.՝ 434 տարի Արշակունյաց թագավորության կործանումից անց: Նա 32 տարի իշխանաց իշխան եղավ և 5 տարի թագավոր[1]: Արշակունյաց թագավորության վերացումից հետո 434 տարի հաշվարկելու դեպքում ստացվում է 862 թ., այսինքն՝ երբ Աշոտը դարձել է իշխանաց իշխան: Ստորև կտեսնենք, որ որոշ աղբյուրներ հենց այդ թվականն են համարում Աշոտի թագավորության սկիզբ: Սակայն, այստեղ կա նաև հաշվարկի սխալ: Ասված է, որ Աշոտը իշխանաց իշխան է եղել 32 տարի: Եթե հավելենք «իշխան» բառը, իրավիճակը դարձյալ չի հանգուցալուծվի, քանի որ 334/885 թվականից հետ գնալով 32 տարի՝ կստանանք 853 թ., որը սխալ է, մինչդեռ եթե հետհաշվարկ կատարենք 887 թվականից, ամեն ինչ կընկնի իր տեղը: Հավանական է, որ Կիրակոս Գանձակեցին հետհաշվարկը կատարել է հենց 887 թվականից:

Մխիթար Այրիվանեցին տեղեկացնում է, որ Աշոտ Բագրատունին գահ է բարձրացել Արշակունիների թագավորության անկումից 434 տարի հետո, իսկ Աշոտի գահ բարձրանալու տարի է համարում հայոց 334/885 թվականը[2]: Պատմիչն այնուհետև հավելում է, որ Բագրատունյաց թագավորությունը գոյատևել է 160 տարի և վերացել հայոց 493 թ. (1044)[3]: Պատմիչը հայոց թվականության սկիզբ համարում է 552 թվականը[4]:

Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է, որ Աշոտը գահ է բարձրացել հայոց 334/885 թ. և թագավորել 5 տարի[5]:

---

[1] Տե՛ս «Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց», աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 80-81:

[2] Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց»: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 55, «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք.Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 70:

[3] Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», էջ 73:

[4] Նույն տեղում, էջ 63:

[5] Տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 127-128:

Միակ հեղինակը, որ Աշոտ Բագրատունու գահ բարձրանալը թվագրում է հայոց ՅԼԵ (335/886) թվականով, Սիմեոն Երևանցի կաթողիկոսն է (XVIII դ.): Նա գրում է, որ Աշոտը գահ է բարձրացել Գևորգ Գառնեցի կաթողիկոսի 22-ամյա գահակալության 10-րդ տարում՝ հայոց 335 թվականին և վախճանվել 5 տարի անց[1]: Աշոտ Ա-ի թագավորության շրջանից շուրջ 9 դար անց գործունեություն ծավալած հեղինակի հաղորդումը, առավել ևս, որ այն չի համընկնում խնդրո առարկայի վերաբերյալ պատմիչներից և ոչ մեկի տեղեկության հետ, կարող է պարզ սխալի հետևանք լինել:

Պատմիչների մյուս խումբը՝ Մովսես Դասխուրանցին, Ասողիկը և Վարդան վարդապետը, Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու տարի են համարում հայոց ՅԼԶ (336/887) թվականը: Նրանք նույնպես Աշոտ Ա-ին վերագրում են 5 տարվա գահակալություն:

Աշոտ Բագրատունու թագավոր հռչակվելու վերաբերյալ տեղեկություն է պահպանել Մովսես Դասխուրանցին. «Յերեք հարիւր երեսուն և վեց թուին (887) եղև Աշոտի Բագրատունւոյ նստուցանել զաթոռ թագաւորութեանն իւրոյ ի մէջ Հայաստանեայց...: Ապա բարեպաշտն Համամ որ և Աղուանից եղև թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունին՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»[2]: Վերջին տեղեկության հետ կապված՝ Ա. Հակոբյանը հիմնավոր կերպով ցույց է տվել, որ այն ընդմիջարկություն է. Համամի կողմից Աղվանից թագավորության վերականգնումը տեղի չի ունեցել Աշոտի կողմից Հայոց թագավորության վերականգնման հետ միաժամանակ, և որ այնտեղ հստակ նշված է եղել վերականգնման տարին՝ 893 կամ 894 թվականը[3]: Մովսես Դասխուրանցու տեղեկության արժեքը հատկապես կարևորվում է այն իրողությամբ, որ իր աշխատության այս հատվածը

---

[1] Տե՛ս «Ջամբռ, Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, եւ իւրոց շրջակայից վանօրէիցն, շարագրեցեալ Սիմէօնէ Կաթուղիկոսէ», Վաղարշապատ, 1873, գլ. Բ:

[2] Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, բնագիրը՝ Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 335:

[3] Տե՛ս **А. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, էջ 203-210:

շարադրելիս պատմիչն օգտվել է խնդրո առարկա իրադարձություննե-րի ժամանակակից Մաշտոց Եղիվարդեցու (հայոց կաթողիկոս՝ 898 թ.)՝ մեզ չհասած պատմական երկից[1]:

Աշոտ Ա-ի վերաբերյալ տեղեկությունների առատությամբ ու բազմազանությամբ աչքի է ընկնում հատկապես ստուգապատում մա-տենագիր Ասողիկի աշխատությունը: Պատմիչը հայոց թվականի սկզբնավորումը դնում է 553 թվականին, սակայն ստորև կտեսնենք, որ հայոց թվականի հետ կապված նրա բոլոր հաշվարկները կատարված են՝ սկսելով 551 թվականից: Պատմիչը սկզբում հաղորդում է, որ խալի-ֆայի կողմից Աշոտն իշխանաց իշխան է կարգվել հայոց ՅԺԱ (331) թավականին, այսինքն՝ 862 թվականին[2]: ՅԺԱ թվականին Աշոտը կարգվեց իշխանաց իշխան և իշխեց 25 (ԻԵ)[3] տարի՝ մինչև հայոց ՅԼԶ (336/887) թվականը[4]: Ապա անդրադառնալով իր իսկ խոսքերով Հայոց թագավորության երրորդ նորոգմանը Բագրատունիների կող-մից՝ Ասողիկը հավելում է, որ այն տեղի է ունեցել «ի ձեռն Աշոտոյ Բագրատունւոյ, որ եղեւ յաւուրս Վասլի Յունաց թագաւորին եւ կա-մակցութեամբ նորին յՅԼԶ (336/887) թուականութեանս Հայոց, եւ ի գալստենէ Փրկչին մերոյ Տեառն Աստուծոյ ամք ՊՁԸ (888), յաւուրս Տեառն Գէորգայ յԺԲ (12) ամի հայրապետութեան նորա»[5]: Պատմիչը հավելում է, որ Աշոտը «նախքան զթագաւորութիւնն երեսնամեայ ժա-մանակաւք իշխան եւ իշխանաց իշխան եղեալ Հայոց եւ Վրաց»[6]: Ի վերջո, ամփոփելով Աշոտ Բագրատունու վերաբերյալ իր հիշատա-կությունները, պատմիչն ավելացնում է, որ «այս Աշոտ կեցեալ ամս ԼԲ (32)[7], թագավորեալ ամս Ե (5)՝ մահուամբ փոխի առ Քրիստոս»[8]:

---

[1] Տե՛ս Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազո-տութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 270-272:

[2] Տե՛ս Ասողիկ, էջ 729:

[3] Այլ ձեռագրերում՝ ամս 27:

[4] Տե՛ս Ասողիկ, էջ 709-710:

[5] Նույն տեղում, էջ 740:

[6] Նույն տեղում:

[7] Այլ ձեռագրերում՝ ԻԱ (21) տարի:

[8] Տե՛ս Ասողիկ, էջ 741:

Պատմիչի հաղորդումներից քաղում ենք հետևյալ տեղեկություն-ները.

ա. Աշոտ Բագրատունին իշխանաց իշխան է դարձել 862 թվականին,
բ. նա իշխանաց իշխան է եղել 25 տարի՝ մինչև 887 թվականը,
գ. նա թագավոր է հռչակվել Բարսեղ Ա-ի օրոք և նրա կամակցությամբ հայոց 336/887 թ. և փրկչական 888 թվականին,
դ. նրա թագավոր դառնալը համընկել է Հայոց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի աթոռակալության 12-րդ տարվան,
ե. նա 30 տարի իշխան և իշխանաց իշխան է եղել (պատմիչը նաև 32 տարի է նշում),
զ. նա թագավորել է 5 տարի,
է. Սմբատը թագավոր է դարձել հայոց ՅԽ (340/891) թվականին[1]:

Պատմիչի հաղորդումներն աչքի են ընկնում ժամանակագրական կուռ կառուցվածքով: Նա համոզված է, որ Աշոտի թագավորության սկիզբը 887 թվականն է, և հստակորեն նշում է, որ նա իշխանաց իշխան է դարձել 862 թ., իշխել 25 և թագավորել 5 տարի: Հաշվելով Աշոտի՝ իշխան դառնալու 855 թվականից, ամեն ինչ համընկնում է: Աշոտի՝ իշխան և իշխանաց իշխան լինելու տևողությունը 32 տարի է, ինչպես նշում է պատմիչը:

Ն. Ադոնցը կարծիք է հայտնել, որ «Աշոտ կեցեալ ամս ԼԲ» հաղորդումը խեղաթյուրված է, որովհետև Աշոտը ավելի երկար է ապրել[2]: Մեր կարծիքով՝ այն խեղաթյուրված չէ, ավելին՝ տեքստում բացակայում են «իշխան և իշխանաց իշխան» բառերը, որոնք հավելելու դեպքում կստանանք «Աշոտ [իշխան և իշխանաց իշխան] կեցեալ ամս ԼԲ»: Խնդիրն այն է, որ Ասողիկն օգտվել է տարբեր հեղինակներից և, քանի որ Աշոտի թագավորության առաջին թվական է համարել 887-ը, հետո հաշվարկ է կատարել և 30 տարին դարձրել 32, որպեսզի Աշոտի իշխանության առաջին տարին լինի 855 թ., այլապես հաշվարկում եր-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 473:

կու տարվա սխալ էր առաջանալու: Պատահական չէ, որ նույն հաշվարկն առկա է նաև Կիրակոս Գանձակեցու երկում, չնայած վերջինս Աշոտի թագավորության սկզբի այլ թվական է նշում:

Ասողիկի տեղեկություններում առկա են նաև որոշ անհամապատասխանություններ: Եթե Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը աթոռակալել է 876 թ. սկսած, նրա հայրապետության 12-րդ տարին 887/888 թվականն է: Սակայն այստեղ ևս պատմիչը հավատարիմ է իր իսկ ներկայացրած ժամանակագրությանը: Ըստ նրա՝ Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի նախորդը՝ Զաքարիա Ա Ձագեցի կաթողիկոսն աթոռակալել է՝ սկսած հայոց ՅԲ (302/853) թվականից 22 տարի՝ մինչև հայոց ՅԻԴ (324/875) թվականը[1]: Պետք է նշել, որ Զաքարիա Գ Ձագեցուն Հովհաննես Դրասխանակերտցին ևս վերագրում է 22 տարվա հայրապետություն[2], մինչդեռ Թովմա Արծրունին՝ 18 տարի[3]՝ սկսած հայոց 303/304 (854-855) թվականից, քանի որ նրա գահակալության 3-րդ տարին, ըստ պատմիչի՝ հայոց 306 (857) թվականն էր[4]: Ասողիկի ժամանակագրության համաձայն՝ Զաքարիա Ա Ձագեցուն փոխարինած Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի աթոռակալության 12-րդ տարին հենց 887 թվականն է:

Պատմիչի տեղեկությունների մեջ գլխավոր հակասությունը վերաբերում է այն նշմանը, թե Աշոտ Բագրատունին թագավոր է հռչակվել 887 թ., և դա տեղի է ունեցել Բարսեղ Ա-ի օրոք, որը մահացել է 886 թվականին: Այդ հույժ կարևոր խնդրի պարզաբանմանը մանրամասնորեն կանդրադառնանք ստորև:

Վարդան վարդապետը հաղորդում է, որ Գևորգ կաթողիկոսի աթոռակալության ժամանակ «ընդարձակեալ մեծին Աշոտի ի Վիրս և Աղուանս, և զԿաւկասայինսն հնազանդեալ, և չէր ինչ պակաս՝ բայց ի թագէ»[5]: Աշոտ Բագրատունին, փաստորեն, Այսրկովկասյան երկրներին տիրել է նախքան թագավոր դառնալը: Պատմիչը նշում է, որ Աշո-

[1] Տե՛ս **Ասողիկ**, էջ 710:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 442:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 338:
[4] Նույն տեղում, էջ 312:
[5] **Վարդան վարդապետ**, էջ 85:

տը գահ է բարձրացել հայոց 336 թ. (887) և փրկչական 888 թ.՝ Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի գահակալության 12-րդ տարում և թագավորել 5 տարի[1]:

Աշոտ Բագրատունու գահակալությանը խիստ համառոտ անդրադարձել է նաև Մխիթար Անեցին: Նա նշում է. «Աշոտ՝ ԼՁ: Սա ԼԱ ամի իշխանութեան իւրոյ թագաւորեաց Հայոց ի Բագրատունեաց»[2]: Մեկ այլ տեղում Մխիթար Անեցին տեղեկացնում է, որ «նաև Վասիլ առաքէ նմա (իմա՛ Աշոտին-Ա. Ե.) թագ՝ լինել իշխանաց իշխան ՅԼՁ թվին»[3]: Այս տեղեկություններից հեռուն գնացող եզրակացություններ կատարելն անհնար է: Այն նման է Սամվել Անեցու հիշատակությանը: Միակ տարբերությունն այն է, որ Մխիթար Անեցին Աշոտի գահ բարձրանալը տեղադրում է նրա իշխանության ոչ թե 32-րդ, այլ 31-րդ տարում: Եթե թեականորեն Աշոտ Բագրատունու իշխանության սկիզբ համարենք 855 թվականը, ապա կստացվի, որ նա գահ է բարձրացել 886 թ. և վախճանվել՝ 891 թվականին: Մինչդեռ հայոց 887 թվականի հիշատակությունը ցույց է տալիս, որ պատմիչը Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու տարի է համարում հենց 887 թվականը:

Այժմ հարկ ենք համարում դարձյալ անդրադառնալ այն իրողությանը, որ Շապուհ Բագրատունու պատմական երկից օգտվել են Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և Վարդան վարդապետը: Ասողիկն ու Վարդան վարդապետը Աշոտ Բագրատունու՝ թագավոր հռչակվելու տարեթիվ են համարում հայոց 336 (887/888) թվականը: Մեր քննությունը ցույց տվեց, որ, ամենայն հավանականությամբ, նույն թվականն է նշում նաև Սամվել Անեցին: Շապուհ Բագրատունու աշխատությանը ծանոթ հեղինակներից միայն Կիրակոս Գանձակեցին է, որ Աշոտ Բագրատունու՝ գահ բարձրանալու տարի է համարում 885 թվականը: Այս ամենից մեծ հավանականությամբ կարող ենք բխեցնել, որ Շապուհ Բագրատունու երկում որպես Աշոտ Բագրատունու՝ թագավոր հռչակվելու տարեթիվ նշված է եղել հայոց

[1] Նույն տեղում, էջ 85-86:

[2] Տե՛ս **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Ե., 1983, էջ 67:

[3] Նույն տեղում, էջ 121:

336 (887/888) թվականը: Այդ նույն թվականը, ինչպես տեսանք, առկա է նաև խնդրո առարկա իրադարձությունների մեկ այլ ժամանակակցի՝ Մովսես Դասխուրանցու երկում:

Անհրաժեշտ է նշել, որ ձեռագրերից մեկում հիշատակված է, թե Համամը մասնակցել է Աշոտ Բագրատունու թագադրությանը և իբր օծել ու օրհնել նրան[1]: Պարզ է, որ Համամի մասնակցությունն Աշոտ Բագրատունու թագադրությանը ոչ միայն հնարավոր էր, այլև պարտադիր, իսկ ինչ վերաբերում է նրա կողմից օծում և օրհնություն կատարելուն, ապա դա անհնար էր, քանի որ նման արարողություններն իրականացնում էր և խնդրո առարկա դեպքում իրականացրել է հայոց կաթողիկոսը[2]:

Վերևում բերված աղբյուրների հեղինակները, բացառությամբ Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու, ապրել և ստեղծագործել են Աշոտ Ա-ից երկար ժամանակ հետո, ուստի վերջինիս գահ բարձրանալու թվականի վերաբերյալ նրանց հիշատակությունները, ինչպես նշեցինք, միանշանակ ընդունվել չեն կարող: Ն. Ադոնցն ընդհանրապես, հաշվի առնելով այն, որ Հովհաննես Դրասխանակերտցին զերծ է մնում ժամանակագրական բնույթի տեղեկություններ հաղորդելուց, խնդրո առարկա թեմայի քննության համար հիմնական աղբյուր համարում է Թովմա Արծրունու աշխատությունը[3]:

Աշոտի՝ գահ բարձրանալու և թագավորության տարիների վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պահպանվել նաև հայկական տարբեր հիշատակարաններում ու ժամանակագրություններում: Ըստ որում՝ այս աղբյուրներում, կապված Աշոտ Ա-ի թագավորության տարիների քանակի հետ, պատկերն այլ է: Ի սկզբանե նշենք, որ անհայտ է, թե որ թվականից են այդ ժամանակագրությունների ու հիշատակարանների հեղինակները սկսել հայոց թվականի հաշվարկը՝ 551, թե 553 թվականից: Այդ կարելի է ճշտել այնտեղ բերված տարբեր թվականների համադրության միջոցով:

---

[1] Տե՛ս «Մայր Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթափյան, Ե., 1965, էջ 40:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 443:

[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 474:

Ժամանակագրությունների ու հիշատակարանների առաջին խումբն Աշոտ Բագրատունու թագավորության սկիզբ է համարում հայոց ՅԼԳ (333/884) թվականը: Պահպանվել է հիշատակություն՝ Աշոտ Ա-ի 5 տարի թագավորելու վերաբերյալ:

Աշոտ Ա-ի թագադրության թվականի վերաբերյալ պահպանվել է մեկ մանրամասն տեղեկություն՝ տարեթվով և ամիս ու ամսաթվով: Մատենադարանի ձեռագիր Ավետարաններից մեկում պահպանվել է Գրիգոր Մաշկևորի անունով գրված մի հիշատակարան, որտեղ նշված է. «Գրեցաւ ի սկիզբն թագաւորութեան Բագրատունեաց Աշոտոյ, ձեռամբ անարժան Գրիգոր Մաշկևորի, ի ժամանակս հայրապետութեան Գէորգա կաթողիկոսին, որ օծեաց զԱշոտ թագաւոր Հայոց, ի թվին մեռում ԳճԼԳ (333/884) և քաղոց ամսոյ Ժ, ի անուն սրբոյն Սքանչելագործին վանից»[1]: Փաստորեն՝ Աշոտը Հայոց թագավոր է օծվել 884 թ. օգոստոսի 26-ին: Ի՞նչ կստացվի, սակայն, եթե 884 թվականից հետ գնանք այն 30 տարին, երբ Աշոտը եղել է իշխան ու իշխանաց իշխան: Կստացվի, որ նա սկսել է իշխել 855 թվականից, որը ճշգրիտ է:

Գրիգոր Մաշկևորի տեղեկությունը հաստատվում է ժամանակագրություններից մյուսում պահպանված տեղեկությամբ. «Թուին ԳճԳ (303) Աշոտ չորրորդ Բագրատունին, որ է որդի Սմբատայ երկրորդի, թագաւոր ամս ԼԱ (31): ...Թուին ԳճԼԳ (333/884) Աշոտ չորրորդ Բագրատունին, ...թագաւորեաց ամս Ե (5)»[2]: 31 տարվա թագավորության հիշատակությունը սրբագրելի է որպես տեղեկություն Աշոտ Բագրատունու իշխանության շրջանի վերաբերյալ:

Հայոց ՅԼԳ կամ ԳճԼԳ (333/884) թվականին Աշոտի գահ բարձրանալու վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել նաև մեկ այլ ժամանակագրության մեջ[3]:

Հիշատակարանների և ժամանակագրությունների մյուս խմբում որպես Աշոտ Ա-ի թագավորության առաջին տարի նշված է հայոց ՅԼԴ (334/885) թվականը: Ըստ որում՝ հարկ է ի նկատի ունենալ, որ

---

[1] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 38-39:

[2] «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. I, էջ 256:

[3] Նույն տեղում, էջ 258:

այս խմբի աղբյուրներում Աշոտ Ա-ին վերագրվում է 7 տարվա թագավորություն՝ բացառությամբ մեկի, որտեղ նշված է 5 տարի:

Ժամանակագրություններից մեկում ասվում է, որ «ի թվին ՅԼԴ (334/885) թագաւորեաց Աշոտ Բագրատունի: Եվ լինի ի բառնալոյ թագաւորութէնէն Արշակունեաց մինչև ի թագաւորութիւնն Բագրատայ ՆԼԴ (434): Այս Աշոտ Լ (30) ամ իշխանաց իշխան եղաց և Է (7) ամ թագաւոր և փոխեցաւ ի Քրիստոս»[1]: Աշոտի մահը, եթե հաշվենք 885 թվականից, ընկնում է 891/892 թ.: Սակայն նկատենք, որ, Աշոտի իշխանաց իշխան հռչակվելու 862 թվականին գումարելով 30 տարի, կստանանք ոչ թե ժամանակագրությունում նշված 885 թ., այլ 892 թ., իսկ վերջինիս էլ՝ թագավորության 7 տարին՝ 899 թ.: Ժամանակագրությունը զգալիորեն խեղաթյուրված է, և Աշոտ Բագրատունու իշխանաց իշխան եղած ժամանակաշրջանում, փաստորեն, ընդգրկված են նաև նրա իշխանության 7 տարիները (855-862):

Մեկ այլ ժամանակագրության մեջ նշված է, որ «Աշոտ ...թագաւորեաց ամենայն Հայոց ամս Է (7). և նախքան զթագաւորն Հայոց և Վրաց իշխանաց իշխան կացուցեալ ամս Լ (30)»[2]:

Անանուն մի ժամանակագրության մեջ Աշոտ Ա-ի թագադրությունը թվագրված է հայոց 334 թվականով (885), իսկ թագավորության տարիների քանակը նշված է 5[3]:

Հիշատակարանների և ժամանակագրությունների մի խումբ էլ Աշոտ Ա-ի թագավորության առաջին տարի է համարում հայոց 336 թվականը (887): Այստեղ առկա են Աշոտ Ա-ի թագավորությանը վերագրվող թե՛ 5 և թե՛ 7 տարիների վերաբերյալ հիշատակություններ:

Սանահինի վանքի հիշատակարանում Աշոտ Ա-ի թագավորության սկիզբ է դիտարկվում Քրիստոսի գալստյան կամ փրկչական ՊՁԸ (888) և Հայոց թվականության ՅԼԶ (336/887) թվականը[4]: Հիշատակա-

---

[1] «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1956, էջ 129: Գոյություն ունի նաև Աշոտ Ա-ի թագադրության թվականի տարընթերցում՝ «ի թուին ԳՃԼԳ (884)» (նույն տեղում):

[2] Նույն տեղում, էջ 501:

[3] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. I, էջ 384:

[4] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջնիածին, 2007, էջ 49-50:

րանի մի մասն արտագրված է Ասողիկից[1]: Սակայն մյուս պարբերության մեջ գրված է հետևյալը. «Այս Աշոտ կացեալ ամս ԻԱ. (21) եւ թագաւորեալ ամս Է. (7) փոխի մահուամբ առ Քրիստոս: Իսկ զկնի Աշոտոյ ՅԽ. (340/891) թուականին թագաւորէ Սմպատ որդին նորա, տիրելով բոլոր հայրենեաց իւրոց Հայոց եւ Վրաց եւ ժառանգելով զքաղաքս հակառակորդաց»[2]: Չնայած այստեղ ևս կա հարազատություն Ասողիկի համապատասխան հատվածի հետ, կա նաև տարբերություն: Աշոտը իշխել է 21 և թագավորել 7 տարի: Սակայն, 7 տարի հավելելով Աշոտի գահակալության սկիզբ համարվող 887 թվականին, կստանանք 893/894 թ., որը սխալ է: Սխալ է նաև իշխելու վերաբերյալ նշված 21 տարին: Հնարավոր է նաև այլ մոտեցում նշված տեղեկություններին: Եթե հիմք ընդունենք, որ Աշոտը, ըստ հիշատակարանի, վախճանվել է 891 թ., և հետհաշվարկ կատարենք թագավորության 7 տարիները, կհասնենք 884 թ., երբ, ըստ Գրիգոր Մաշկևորի տեղեկության, նա օծվել է Հայոց թագավոր: Այդ թվականից հետհաշվարկ կատարելով 21 տարի, կհասնենք 863 թ., երբ Աշոտը նոր էր միայն հռչակվել իշխանաց իշխան: Փաստորեն՝ խոսքը կարող է լինել Աշոտի իշխանաց իշխանության տարիների վերաբերյալ: Պետք է նշել, որ Աշոտի 21 տարվա իշխանության մասին ակնարկ կա նաև Ասողիկի աշխատության որոշ ձեռագրերում[3]: Կարելի է ենթադրել, որ Սանահինի վանքի հիշատակարանում ի մի են բերված Աշոտ Բագրատունու իշխանության և գահակալության վերաբերյալ մի քանի աղբյուրների տեղեկությունները, սակայն չի իրականացվել հակասող տեղեկությունների հաշտեցում:

Մեկ այլ հիշատակարանում նշված է, որ «թագաւորէ Հայոց Աշոտ ամս Ե. (5): Հայ թվական ՅԼՉ (336/887) էր»[4]:

Դավիթ Բաղիշեցու կազմած ժամանակագրության մեջ նշված է, որ «թագաւորեաց Աշոտ, յետ ԼԱ (31) ամի իշխանութեան իւրոյ... թվին ՅԼՉ (336/887) և ի գալստենէ Փրկիչին ամք ՊՁԸ (888), ի հայրապե-

---

[1] Հմմտ. «Յիշատակարան Սանահնոյ վանից», էջ 49-50 և Ասողիկ, էջ 158:

[2] «Յիշատակարան Սանահնոյ վանից», էջ 50:

[3] Տե՛ս **Ասողիկ**, էջ 740:

[4] «Յիշատակարանք ձեռագրաց», կազմ. Գարեգին Ա Կաթողիկոս, հ. Ա (Ե. դարից մինչեւ 1250 թ.), 48 նմանահանութիւններով, Անթիլիաս, 1951, էջ 87:

տութեան Գէորքեայ ԺԲ (12) ամս, ... ի բառնալոյ թագաւորութեան Արշակունեաց ամք ՆԼԴ (434): Եւ կացեալ սա թագաւոր ամս Է (7) վաղճանի»[1]: Այս տեղեկության մեջ նույնպես առկա են վերևում բերված գրեթե բոլոր ժամանակագրական հակասությունները, քանի որ հեղինակը պարզապես բանաքաղությամբ է զբաղվել: Սակայն, ըստ նրա, Աշոտը թագավորել է 7 տարի, որը կարևոր է: Բանաքաղն այստեղ հիմք է ընդունել Աշոտի գահակալության տարիների վերաբերյալ ամենատարածված տեղեկություններից մեկը՝ առանց նկատելու, որ այն հակասում է իր իսկ կողմից հաղորդվող մնացյալ տեղեկություններին: Խնդիրն այն է, որ նա Աշոտի գահակալության սկիզբ է համարում 887 թվականը, որին, եթե գումարենք 7 տարի, կհասնենք 893/894 թ., որը սխալ է:

Անհրաժեշտ է հավելել, որ, ըստ «Յայսմաւուրք»-ի՝ Աշոտ Ա-ի հիշատակի (վախճանի) օրը նշվել է մարերի ամսի 21-ին[2]: Խնդրին անդրադարձած Ղ. Ալիշանը և Մ. Օրմանյանը, ինչպես կտեսնենք, այդ տեղեկության հիման վրա կարծիք են հայտնել, որ Աշոտ Ա-ն վախճանվել է հայոց ՅԼԹ թվականի մարերի 20-ին կամ 21-ին, այսինքն՝ 891 թ. փետրվարի 1-ին կամ 2-ին:

Այստեղ հարկ է նշել մի կարևոր իրողություն: Վերևում բերված և ոչ մի աղբյուրում՝ բացառությամբ XVIII դ. հեղինակ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի երկի, Աշոտի թագադրությունը հայոց 335 թ. (886 թ. ապրիլ-887 թ. ապրիլ[3]) նշված չէ: Հավանական չէ այն, որ, եթե իրոք նա թագադրվել է այդ թվականին, աղբյուրները կարող էին այն լիովին շրջանցել: Միակ բացառությունը կարող է լինել այն, որ հայոց 334 թվականը սկսվել է 885 թ. ապրիլին ու ավարտվել 886 թ. ապրիլին, այսինքն՝ Աշոտը կարող էր թագադրված լիներ 886 թ. առաջին չորս ամիսների ընթացքում, մանավանդ, որ կենդանի էր Բարսեղ Ա-ն, որի կամակցությամբ Աշոտը հռչակվել է թագավոր:

---

[1] «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. II, էջ 336:

[2] Տե՛ս «Յայսմաւուրք», էջ 233-234:

[3] Այս և հետագա հաշվարկները կատարված են ըստ Բ. Թումանյանի տոմարական հաշվումների աղյուսակների [տե՛ս **Բ. Թումանյան**, Տոմարական հաշվումներ,-«Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1964, թիվ 5, էջ 55-60]:

Աշոտ Բագրատունին «Քարթլիի մատյան»-ում 860-ական թթ. վերջերին հիշատակվում է որպես թագավոր: Վրացական աղբյուրը հաղորդում է, որ Կղարջքի Բագրատունիներից Գվարամն Աշոցքը «բաժին հանեց իր կնոջ եղբորը՝ հայոց արքային»[1]: Ըստ որում՝ այդ իրադարձությունը վերաբերում է կամ նախքան 870 թ. տեղի ունեցած դեպքերին կամ հենց 870 թվականին, քանի որ դրանից անմիջապես հետո՝ 870 թ., ըստ վրացական աղբյուրի հաղորդած տեղեկությունների ժամանակագրական հերթականության՝ մահացել է Գվարամի եղբայր Ատրներսեհը[2]:

Աշոտ Բագրատունու իշխանության և թագավորելու վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել նաև Միքայել Ասորու «Ժամանա-կագրութիւն» աշխատության մեջ: Նա հաղորդում է, որ Աշոտն իշխել է 40 տարի, իսկ Սմբատ Ա-ն թագավորել է հայոց 339 թվականից (890 թ. ապրիլ-891 թ. ապրիլ) սկսած՝ 22 տարի: Ժամանակագիրը տեղեկաց-նում է նաև, որ Սմբատի թագավորության 22-րդ տարում, որը հայոց 360 (911-912) թվականն էր, Ատրպատականի ամիրա Յուսուֆը ներ-խուժեց Հայաստան: Նույն թվականին էլ Միքայել Ասորին դնում է Սմբատ Ա-ի մահը[3]: Այն, որ Աշոտի իշխանության 40 տարիների հիշա-տակությունն աղավաղման հետևանք է, կասկածից դուրս է: Մյուս կող-մից, Աշոտի իշխան և իշխանաց իշխան եղած շրջանի վերաբերյալ սկզբնական 30 տարիների հիշատակությունը խեղաթյուրվել է: Իսկ Աշոտ Ա-ի մահը հայոց 339 թվականին հայտնի է հայկական աղբյուր-ներից: Քանի որ Սմբատ Ա-ի գահակալության 22 տարիները, որոնց վերաբերյալ հիշատակությունը վերցված է, հավանաբար, Հովհաննես Դրասխանակերտցուց[4], նա գումարել է 339 թվականին, Հայոց թագա-վորի գահակալության 22-րդ տարին նույնացել է հայոց 360 թվակա-նին:

---

[1] «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյան, Հ. Մկրտումյան,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, թիվ 9, էջ 63:

[2] Նույն տեղում, էջ 64:

[3] Տե՛ս “Chronique de Michel le Syrien patriarche Jacobite D’Antioche (1166-1199)”, Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905, էջ 514-516:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 506:

Ցավոք, բյուզանդական և արաբական աղբյուրներն Աշոտ Բագրատունու թագադրման հանգամանքների մասին լռում են:

Ամփոփելով Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու և թագավորության տարիների վերաբերյալ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների քննությունը՝ կարող ենք նշել, որ երկու դեպքում էլ հիշատակությունները բազմազան են: Աշոտի՝ գահ բարձրանալը թվագրված է 884, 885 կամ 887 թվականներով, իսկ թագավորության տևողությունը՝ 4, 5 կամ 7 տարի է:

Վերոհիշյալը հետազոտողների առջև քննության հսկա դաշտ է բացում, ուստի և զարմանալի չէ տեսակետների բազմազանությունը՝ հիմնված վերոհիշյալ տեղեկություններից մեկի, դրանց մի մասի կամ ամբողջի համադիր վերլուծության վրա:

Աշոտի՝ 4 տարի թագավորելու մասին խոսում է միայն խնդրո առարկա դեպքերի ժամանակակից Թովմա Արծրունին:

Բագրատունի առաջին թագավորի գահակալությունը 884 թվականով թվագրող աղբյուրներում գրեթե չի խոսվում նրա թագավորության տարիների վերաբերյալ, և միակ հիշատակության մեջ նրան վերագրվում է թագավորության 5 տարի:

Բագրատունյաց թագավորության հիմնադրումը 885 և 887 թվականներով թվագրող աղբյուրներում Աշոտ Ա-ին վերագրվում է 5 և 7 տարվա թագավորություն, ըստ որում՝ առաջինները պահպանել են թագավորության 5 տարիների վերաբերյալ 4 և 7 տարիների վերաբերյալ 2 հիշատակություն, իսկ երկրորդները՝ թագավորության 5 և 7 տարիների վերաբերյալ երկուական հիշատակություն: Աշոտ Ա-ի՝ 7 տարի թագավորելու վերաբերյալ հիշատակություն կա նաև մի ժամանակագրության մեջ, որտեղ բացակայում է նրա՝ գահ բարձրանալու թվականը:

Արձանագրենք, որ աղբյուրներում Աշոտ Բագրատունու՝ 886 թ. (հայոց ՅԼԵ թվական) գահ բարձրանալու վերաբերյալ, բացի ուշ շրջանի հեղինակ Սիմեոն Երևանցու հաղորդումից, այլ տեղեկություն չկա: Չկա հիշատակություն նաև նրա՝ 6 տարի թագավորելու մասին:

## Գլուխ Բ
## ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու թվականի և գահակալության տարիների հարցին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ, ոմանք՝ մանրամասնորեն, ոմանք՝ հպանցիկ, ոմանք էլ՝ ուղղակի նշելով որևէ թվական:

Ուսումնասիրողների մի խումբ Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու թվականի ճշգրտման համար հիմք են ընդունում Գրիգոր Մաշկևորի տեղեկությունը:

Գ. Հովսեփյանը Գրիգոր Մաշկևորի տեղեկության հիման վրա առաջարկում է վերանայել Աշոտ Ա-ի թագավորության սկիզբը՝ այն համարելով 884 թվականը[1]:

Հ. Բարթիկյանը ժխտում է Բյուզանդիայի կայսրից Աշոտ Բագրատունու ստացած թագի վարկածը՝ նշելով, որ նման թագ չի եղել, իսկ Աշոտ Ա-ն իրեն հռչակել է Հայոց թագավոր 884 թ. օգոստոսի 26-ին[2]:

Գ. Գրիգորյանը ևս կարծում է, որ Աշոտը գահ է բարձրացել 884 թ. օգոստոսի 26-ին[3]:

Վ. Հակոբյանը նշում է, որ Գրիգոր Մաշկևորի հիշատակարանում նշված Հայոց ԳՃԼԳ (333) թվականի քաղոց ամսվա 10-ը համապատասխանում է օգոստոսի 26-ին, որը եղել է չորեքշաբթի: Ըստ ուսումնասիրողի՝ չորեքշաբթի օրերին, ի նշան Քրիստոսի մատնության, հայոց եկեղեցին արգելում էր պատարագ մատուցելը: Դրա հիմքով նա փորձում է պատասխանել այն հնարավոր կասկածներին, թե արդյո՞ք նման մի օր տեղի կունենար թագավորի օծումը[4]: Հովհաննես Դրաս-

---

[1] Տե՛ս «Յիշատակարանք ձեռագրաց», հ. Ա, էջ 82-84:

[2] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,-«Լրաբեր (հաս. գիտ)», 1996, թիվ 1, էջ 17-29:

[3] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Ե., 1983, էջ 116:

[4] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. II, էջ 156-157:

խանակերտցին այս մասին գրում է. «...մեծ հայրապետն Գէորգ և զիոգևոր օրհնութեանցն գովութիւնս աստուածային ի վերայ կատարեալ փոխանակ օծման սրուակի իւղոյն պսակէն զնա թագաւոր ի վերայ Ասքանազեան ազգին»[1]: Մ. Օրմանյանը նշում է, թե կարծես «լոկ աղօթք և օրհնութիւն կատարուած է՝ և ոչ օծում»[2]: Վ. Հակոբյանը հավելում է, որ Հովհաննես Դրասխանակերտցու ցուցումը Գրիգոր Մաշկևորի տեղեկությունը դարձնում է հիմնավոր, այսինքն՝ օրը, իրոք, եղել է չորեքշաբթի և պատարագ չեն մատուցել: Ուստի նա անիմաստ է համարում ԳՃԼԳ թվականը համարել խեղաքյուրված և սրբագրել ԳՃԼԴ-ի (885)[3], երբ քաղոց ամսվա 10-ը հինգշաբթի էր: Ի հիմնավորումն Աշոտ Բագրատունու՝ 884 թ. թագավոր հռչակվելուն, նա մեջբերում է ևս երկու հիշատակարան, որտեղ իշխանաց իշխանի թագավոր հռչակվելը թվագրված է Հայոց 333 թվականով[4]: Դրա հիման վրա Վ. Հակոբյանը կարծիք է հայտնում, որ Կիրակոս Գանձակեցու և Ստեփաննոս Օրբելյանի կողմից հիշատակվող՝ Աշոտի թագադրության ՅԼԴ (334/885) թվականը սրբագրելի է ՅԼԳ (333/884)-ի[5]: Այնուհետև, նա հիմնավոր է համարում այն, որ, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Աշոտ Ա-ն դաշինք է կնքել Բյուզանդիայի Բարսեղ կայսեր հետ, որը մահացել է 886 թ. մայիսի 11-ին կամ այլ հաշվարկով՝ օգոստոսի 29-ին: Մյուս կողմից, նա տեղին նշում է, որ թեև Հովհաննես Դրասխանակերտցու կողմից հիշատակված, Աշոտին թագ բերող ոստիկան Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանին մահացել է 882/883 թ., սակայն թագը կարող էր բերել հենց նա, քանի որ պատմիչի վկայությունից երևում է, որ նա այն բերել է նախքան թագադրության արարողությունը: Ինչ վերաբերում է Ասողիկի և Վարդան վարդապետի կողմից նշվող՝ թագադրության ՅԼԶ (887) թվականին, ապա նա այդ հաղորդումները հակադրում է Վարդան վարդապետի այն տեղեկությանը, որ

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 443:

[2] Տե՛ս **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 991:

[3] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», էջ 39, ծանոթ. 1:

[4] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. I, էջ 256, 258, 260 (ծանոթ. 16, 18):

[5] Նույն տեղում, հ. II, էջ 158:

թագադրությունը տեղի է ունեցել Բարսեղ Ա կայսեր օրոք, ավելին, կայսրը թագ է ուղարկել Աշոտին: Ըստ նրա՝ պատմիչների նշած թվականը սխալ է[1]:

Վ. Հակոբյանը նաև խոսում է այն իրողության մասին, որ Աշոտ Բագրատունին դարձել էր 862 թ. սկսած երկրի փաստական տեր ու տիրական, երբ հռչակվեց իշխանաց իշխան[2]: Պատահական չէ, որ մի քանի պատմիչներ Արշակունյաց թագավորության կործանումից (428) մինչև Բագրատունիների թագավորության ստեղծումը հաշվում են 434 տարի[3]: Թագավորության վերականգնման թվական է դառնում 862-ը: Սրա հետ է կապված նաև այն, որ Աշոտ Բագրատունու կինը՝ Կատրանիդեն, Գառնիի 879 թ. արձանագրության մեջ կոչվում է հայոց թագուհի[4]: Բացի այդ՝ պետք է նշել, որ Աշոտ Բագրատունին այնքան ինքնիշխան էր դարձել երկրի ղեկավարման գործում, որ նույնիսկ 878 թ. վտարեց Մուհամմադ իբն Խալիդ (ըստ Թովմա Արծրունու՝ Ահմադ որդի Հալթի) ոստիկանին[5]:

Նա ի վերջո հիմնավորված է համարում Աշոտ Բագրատունու թագադրության՝ 884 թ. օգոստոսի 26-ին տեղի ունեցած լինելը[6]: Հետազոտողը, սակայն, չի խոսել այն մասին, որ Աշոտի թագադրությունը թվագրելով 884 թվականով՝ անհրաժեշտություն է առաջանում ճշգրտում մտցնելու նաև նրա թագավորության տարիների վերաբերյալ, մասնավորապես, թե քանի տարի է թագավորել Աշոտ Ա-ն:

---

[1] Նույն տեղում:

[2] Աշոտը իշխանաց իշխան է հռչակվել 862 թ. (տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 127): Մ. Բիթարյանը, խոսելով Ալի իբն Յահիա ալ-Արմանիից հետո հիշատակվող 5 ոստիկանների վերաբերյալ, գտնում է, որ նրանք զուրկ էին փաստական իշխանությունից [տե՛ս **Մ. Բիթարյան**, Արմինիայի արաբ ոստիկանների ժամանակագրությունը,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, թիվ 6, էջ 97]:

[3] Տե՛ս **Սամուէլ Անեցի**, էջ 95, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 75, **Մխիթար Այրիվանեցի**, էջ 55 և այլն:

[4] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Հայկական գրի սկզբնական տեսակները (հնագրականբանասիրական ուսումնասիրություն), Ե., 1939, էջ 88:

[5] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 128:

[6] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. II, էջ 162: Տե՛ս նաև **V. Hakopian**, La date de l'avènement d'Ašot, premier roi Bagratide, "Revue des études arméniennes", II, 1965, էջ 282:

Խնդիրն այն է, որ իր իսկ կազմած ժողովածուում որոշ դեպքերում հանդիպում է Աշոտ Ա-ի՝ 7 տարի թագավորելու վերաբերյալ տեղեկությունը:

Ա. Մաթևոսյանը կարծում է, որ հնարավոր է՝ ՅԼԳ (884) ու ՅԼԴ (885) թվականների գրության մեջ տեղի ունեցած լինի Գ և Դ տառերի շփոթ, ուստի այն պատմիչների երկերում, որտեղ Աշոտի գահի բարձրանալը թվագրված է հայոց ՅԼԴ թվականով, վերջինս սրբագրելի է ՅԼԳ-ի[1]: Նման շփոթություն առկա է նաև ժամանակագրություններից մեկում[2]:

Բ. Առաքելյանը իր տարբեր աշխատություններում Աշոտ Բագրատունու գահակալության առաջին տարին համարել է 884, 885 կամ 886 թվականները[3]: Նա այն տեսակետն է հայտնում, որ Աշոտ Բագրատունին նախարարների կողմից թագավոր է հռչակվել Շիրակավանի ժողովում (ըստ Բ. Առաքելյանի՝ 869 թ., իրականում՝ 862թ.), որի արդյունքում Սևանի արձանագրության մեջ նա Հայոց թագավոր է հիշատակվում 874 թ., իսկ Գառնիի արձանագրության մեջ (879 թ.) նրա կին Կատրանիդեն կոչված է հայոց թագուհի: Բացի այդ՝ Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության կողմից Աշոտը պաշտոնապես թագավոր է հռչակվել 886 թ.[4]:

Ա. Տեր-Ղևոնդյանը նույնպես իր մի շարք աշխատություններում Աշոտ Ա-ի թագավորության սկիզբը դնում է 884, 885 և 886 թթ.[5]: Հիմն-

---

[1] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», էջ 39, ծանոթ. 1:

[2] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. II, էջ 129:

[3] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Հայկական պետականության վերականգնումը IX դարի վերջերին,-«ՊԲՀ», 1971, թիվ 4, էջ 38:

[4] Տե՛ս **Б. Аракелян**, Гарни, т. I, Е., 1951, էջ 84-87: Վ. Հակոբյանը նշում է, որ 874 թ. արձանագրության մեջ Աշոտ Բագրատունին թագավոր է հիշատակվում միայն Բ. Առաքելյանի ընթերցման համաձայն, մինչդեռ Լ. Մելիքսեթ-Բեկը կարդում է միայն Աշոտի անունն առանց «թագավոր» տիտղոսի (տե՛ս **Л. Меликсет-Беков**, Новооткрытая надпись на Севане от 874 г.,-"Сборник памяти акад. Н.Я. Марра", М.-Л., 1939, էջ 413): Բացի այդ՝ Ստեփաննոս Օրբելյանը նույնպես, մեջ բերելով արձանագրության տեքստը, Աշոտին թագավոր չի հիշատակում, այլ իշխանաց իշխան:

[5] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 285, **նույնի**՝ «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում,-«ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 130, նույնի՝ Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-10-րդ դարերում,-«Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1957, թիվ 10, էջ 86 և այլն:

վելով Բ. Առաքելյանի հետազոտությունների վրա՝ նա կողմ է արտահայտվում այն ենթադրությանը, որ նախարարների կողմից Աշոտը թագավոր է հռչակվել մոտավորապես 869 թ., քանի որ 870-ական թթ. Խալիֆայությունում իրավիճակն այնպիսին էր, որ Աշոտի թագ ստանալու հավանականությունը բացառվում էր, մինչդեռ 860-ական թվականների վերջը բավական հաջող էր դասավորվում Աշոտ Բագրատունու համար[1]: Ըստ նրա՝ ոստիկան Իսա իբն աշ-Շայխն Աշոտին թագ է բերել 884 թ.[2], թեև իրականում, ինչպես կտեսնենք, ոստիկանն այդ թվականին արդեն մահացել էր:

Աշոտ Բագրատունու՝ 884 թ. գահ բարձրանալու տեսակետն ամրագրվել է նաև Բյուզանդիայի պատմությանը նվիրված վերջին հրատարակություններում[3]:

Ուսումնասիրողների մի մեծ խումբ՝ Մ. Չամչյանցը, Ղ. Ինճիճյանը, Էդ. Դյուլորիեն, Հ. Դաղբաշյանը, Ստ. Պալասանյանը, Հ. Թոփչյանը, Մ. Օրմանյանը, Ա. Ակուլյանը, Հ. Աճառյանը, Ա. Կրիմսկին, Խ. Սամուելյանը, Հ. Հարությունյանը, Կ. Թումանովը, Ս. Երեմյանը, Ռ. Մաթևոսյանը, Վ. Վարդանյանը և Կ. Մաթևոսյանն Աշոտ Բագրատունու գահ բարձրանալը թվագրում են 885 թվականով[4]: Հաշվարկի հիմքն

---

[1] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 235-236:

[2] Նույն տեղում, էջ 285:

[3] Տե՛ս օրինակ՝ The Cambridge History of Byzantine Empire, c. 500-1492, Cambridge, 2008, էջ 300:

[4] Տե՛ս **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 703, **Ղ. Ինճիճեան**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 35, **Éd. Dulaurier**, Recherches sur la Chronologie Arménienne, Technique et Historique, Ouvrage formant les Prolégomènes de la Collection Intitulée Bibliothèque Historique Arménienne, tome I, Paris, 1859, էջ 266-270, 425, **H. Daghbaschean**, Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893, էջ 71, **Ստ. Պալասանեան**, Պատմութիւն Հայոց (սկզբից մինչեւ մեր օրերը), Թիֆլիս, 1902, էջ 280, **H. Thopdschian**, Die inneren Zustände von Armenien unter Ašot I (ausgenommen die Geschichte der armenischen Naxararowtiwns und der armenischen Kirche), Inaugural-Dissertation, Berlin, 1904, էջ 37, **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 993-994, **A. Akulian**, Einverleibung armenischer Territorien durch Byzanz im XI. Jahrhundert, Grüningen, 1912, էջ 11-12, **Հ. Աճառյան**, Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ), Ե., 2004, էջ 178, **А. Крымский**, Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Шеки,-Сборник “Памяти академика Н. Я. Марра (1864-1934)”, М.-Л., 1938, էջ 376, **Խ. Սամուելյան**, Հին հայ

այն է, որ, եթե Աշոտը իշխել է 5 տարի և մահացել 890 թ., զահ բարձրանալն էլ ինքնըստինքյան ընկնում է 885 թ.: Այդ թվականն են մատնանշում հայկական որոշ աղբյուրներ:

Վերոհիշյալ հեղինակներից Աշոտ Ա-ի գահակալությանը մանրամասն անդրադարձել են Մ. Չամչյանցը և Մ. Օրմանյանը: Մ. Չամչյանցը գտնում է, որ 886 թ., արդեն Բարսեղ կայսեր հաջորդ Լևոն Զ-ի օրոք, Աշոտ Ա-ն Սեբաստիայով ուղևորություն է կատարել Կոստանդնուպոլիս՝ հանդիպելու նոր կայսրին: Ըստ նրա՝ Աշոտ Ա-ն 859 թ. սկիզբ առած 26-ամյա իշխանությունից և 5-ամյա թագավորությունից հետո մահացել է 889 թ.՝ ընդհանուր առմամբ իշխելով 31 տարի և 7 ամիս[1]:

Մ. Օրմանյանը հերքում է Աշոտ Ա-ի՝ Կոստանդնուպոլիս մեկնելու հավանականությունը և նշում, որ, հավանաբար, Մ. Չամչյանցը շփոթել է և Աշոտ Բ-ի ուղևորությունը վերագրել Աշոտ Ա-ին: Նա հավելում է նաև, որ, ըստ «Յայսմաւուրքի», Աշոտ Ա-ի հիշատակի օրը մարտի 21-ն էր, այսինքն՝ նրա մահը վրա է հասել հայոց 339 թ. մարերի 21-ին կամ 891 թ. փետրվարի 2-ին[2]:

Ա. Գրենն Աշոտ Ա-ի թագավորությունը թվագրում է 885-889 թթ.[3]:

---

իրավունքի պատմությունը, հ. I, Ե., 1939, էջ 132, **Հ. Հարությունյան**, Հայաստանը IX-XI դարերում, Ե. 1959, էջ 29, The Cambridge Medieval History, vol. IV. The Byzantine Empire, p. I, Cambridge, 1966, էջ 612, **С. Еремян**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке.-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1971, թիվ 3, էջ 4, **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990, էջ 96-97, նույնի՝ Բագրատունի թագավորների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ II) բյուզանդական թագը,-«ՊԲՀ», 2001, թիվ 1, էջ 168, **Վ. Վարդանյան**, Արծրունիները հայոց պատմության մեջ, Ե., 2002, էջ 92, **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, առաջաբանը՝ Կ. Մաթեւոսեանի, էջ 13, ծանոթ. 45: Հայոց թագավորության վերականգնման թվագրումը 885 թվականով նախկինում հիմք ենք ընդունել նաև մենք [տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908), Ե., 2011]:

[1] Տե՛ս **Մ. Չամչեանց**, նշվ. աշխ., էջ 676, 706:

[2] Տե՛ս **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 993-994:

[3] Տե՛ս **А. Грен**, Династия Багратидов в Армении,-"Журнал министерства народного просвещения", часть CCXC, С.-Петербург, 1893, ноябрь, էջ 72-75:

Ժ. Լորանը և Ռ. Գրուսեն Աշոտի գահ բարձրանալն ընդհանուր առմամբ թվագրում են 885 թ. ապրիլից մինչև 886 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածով, այսինքն՝ հայոց ՅԼԴ/334 թվականով[1]:

Գ. Օստրոգորսկին կարծում է, որ Աշոտը խալիֆայից թագ է ստացել 885 թ., իսկ Բյուզանդիայից՝ 887 թվականին[2]:

Ուսումնասիրողների մի մասն էլ փորձ է կատարում Աշոտի թագավորության առաջին տարի համարել 886 թվականը, չնայած որ ոչ մի աղբյուրում նման տեղեկություն չի պահպանվել:

Ն. Ադոնցը, Աշոտ Ա-ի թագադրության սկիզբ համարելով 886 թվականը, կատարում է նաև մի հույժ կարևոր դիտարկում: Խալիֆայից թագ ստանալն ու թագադրության հանդեսը միաժամանակ տեղի չեն ունեցել, որի հետևանքով աղբյուրների մի մասում Աշոտի թագավորությունը հաշված է թագ ստանալու, իսկ մյուս մասում՝ թագադրության օրվանից: Ն. Ադոնցն Աշոտի՝ թագավորության վերաբերյալ ամենաարժանահավատն է համարում Թովմա Արծրունու տեղեկությունները, որոնց հիման վրա հանգում է այն եզրակացության, որ Աշոտ Ա-ն թագավորել է 886-890 թթ.: Ըստ նրա՝ Աշոտ Ա-ի թագավորության շրջանի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելիս Սամվել Անեցին և Վարդան վարդապետն օգտվել են Ասողիկից, իսկ Կիրակոս Գանձակեցին՝ Սամվել Անեցուց: Նրանց բոլորի հիմնական աղբյուրը, բացի Հովհաննես Դրասխանակերտցուց, եղել է Թովմա Արծրունին[3]: Ն. Ադոնցը փորձում է հաշտեցնել աղբյուրների տեղեկությունները և առաջարկում Աշոտի գահակալությունը հաշվարկել 886 թ. սկզբից[4]:

Ժ. Սեն-Մարտենը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Կաժդանը և Կ. Յուզբաշյանը նույնպես կարծում են, որ Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու ամենահավանական տարին 886 թվականն է[5]:

---

[1] Տե՛ս **J. Laurent**, L'Arménie entre Byzance et I Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919, էջ 282-284, R. Grousset, Histoire de l'Arménie. Des origines à 1071, Paris, 1947, էջ 394-395:

[2] Տե՛ս **G. Ostrogorsky**, Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956, էջ 265:

[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 472-477, 501 և այլն:

[4] Նույն տեղում, էջ 477:

[5] Տե՛ս **J. Saint-Martin**, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1818, էջ 349-350, **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի

Վ. Կրաչկովսկայան, որն Աշոտ Ա-ի գահ բարձրանալը նույնպես թվագրում է 886-ով, կարծում է, որ նա թագավորել է մինչև հիջրայի 278 թվականը (891)[1]:

Ա. Շահինյանը, հենվելով Թովմա Արծրունու հիշատակության, ինչպես նաև Ն. Ադոնցի մոտեցումների վրա, Աշոտ Ա-ին վերագրում է 4 տարվա թագավորություն: Նա պատմիչի կողմից հիշատակվող Աշոտի մահվան թվականից (339/890) հանում այդ 4 տարին և ստանում 335/886 թ.: Այնուհետև նա կարծիք է հայտնում, որ Աշոտի թագադրությունը տեղի է ունեցել 886 թ. ապրիլի 18-ի [հայոց ՅԼԴ (334) թվականի վերջը] և օգոստոսի 29-ի (Բասեղ Ա կայսեր մահվան օրը) միջև, քանի որ Աշոտը թագադրվել է Բարսեղ Ա-ի օրոք[2]: Սակայն հետազոտողը չի անդրադառնում այն իրողությանը, որ հայկական աղբյուրներից և ոչ մեկը Բագրատունյաց թագավորության հիմնադրումը 886 թ. չի նշում:

Ռ. Ֆասմերն Աշոտ Ա-ի թագավորության առաջին տարի է համարում 886/887 թվականը[3]:

Մ. Կանարի կարծիքով՝ Աշոտ Բագրատունին խալիֆայից թագ է ստացել հիջրայի 273 թ. (886-887)[4]:

Հ. Նալբանդյանը գտնում է, որ Աշոտ Բագրատունին թագավոր է հռչակվել 886 կամ 887 թվականին: Նա նշում է, որ պատմիչները Աշոտի թագադրությունը դնում են հայոց ՅԼԴ թվականին, որը, ըստ նրա,

---

պատմության, հ. Ա, Ե., 1957, էջ 38, История Византии в трех томах, т. II, М., 1967, էջ 191, **К. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, էջ 55, 72, **նույնի**՝ «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից,-«ՊԲՀ», 1975, թիվ 1, էջ 45:

[1] Տե՛ս **В. Крачковская**, Печать Багратида Ашота с арабской надписью,-"Краткие сообщения о докладах и полевых исследованиях института истории материальной культуры", XII, М.-Л., 1946, էջ 116: Հիջրայի և ներկայիս թվականության թվականների համապատասխանեցման աղյուսակները տե՛ս **И. Орбели**, Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления, М.-Л., 1961:

[2] Տե՛ս **Ա. Շահինեան**, Հայոց վերջին կայսրութեան ծնունդը արաբական գերիշխանութեան պայմաններում,-«Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԼԲ, Պէյրութ, 2012, էջ 169:

[3] Տե՛ս **Ռ. Ֆասմէր**, Ժամանակագրութիւն Հայաստանի ոստիկաններու առաջին Աբբասեանց օրով, Վիեննա, 1933, էջ 98-102:

[4] Տե՛ս **M. Canard**, Arminiya,-"The Encyclopaedia of Islam", new edition, vol. I, A-B, Leiden, 1986, էջ 637:

համապատասխանում է 886 կամ 887 թվականին[1]: «Բայց այս տեղեկությունը խնդրո առարկա է դառնում, երբ գիտենք, թե Իսա իբն աշՇայխը այդ թվականին արդեն մահացել էր: Նրա մահվան թվական տալիս է Հիջրի 268 թ. (մ. թ. 881-882) Իբն Խալդունը. իսկ Հիջրի 269 թ. (մ. թ. 882-883) Իբն էլ Աթիրը (Է, էջ 159) և Հիջրի 270 թ. (883-884) Տաղրիբերդին (Գ, 46)»[2]:

Լեոն կարծիք է հայտնել, որ Աշոտ Ա-ն թագավորել է 887 թվականից սկսած մինչև 890 թ. վերջը կամ 891 թ. սկիզբը[3]:

Ղ. Ալիշանը, որն ընդարձակ աշխատություն է նվիրել Աշոտ Ա թագավորին, գրում է, որ նա գահակալել է 887-891 թթ.՝ ավելի քան 4 տարի[4]: Նա, հաշվի առնելով այն, որ Աշոտ Ա-ի հիշատակի օրը նշվում էր մարերի 20-ին, կարծիք է հայտնում, որ նա մահացել է կամ 890 թ. վերջին և կամ 891 թ. փետրվարի 1-ին: Խնդիրն այն է, որ հայկական աղբյուրների մի զգալի մասն Աշոտ Ա-ի մահը թվագրում են հայոց ՅԼԹ (339) թվականով, իսկ այդ թվականի մարերի 20-ը համապատասխանում է փետրվարի 1-ին[5]: Վերևում տեսանք, որ Մ. Օրմանյանն Աշոտ Ա-ի հիշատակի օրը «Յայսմաւուրք»-ի համաձայն դնում է մարերի 21-ին, որը համապատասխանում է փետրվարի 2-ին: Այդ հակասությունը հետևանք է պարզ սխալի, քանի որ «Յայսմաւուրք»-ում նշված է մարերի 21-ը[6]:

Ա. Տեր-Միքելյանը և Մ. Ղազարյանն Աշոտ Ա-ի թագավորության առաջին տարի են համարում 887 թվականը[7]:

---

[1] Տե՛ս **Հ. Նալբանդյան**, նշվ. աշխ., էջ 124:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1967, էջ 504-510:
[4] Տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 500:
[5] Նույն տեղում, էջ 510:
[6] Տե՛ս «Յայսմաւուրք», էջ 233-234:
[7] Տե՛ս **A. Ter-Mikelian**, Die armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen, vom IV. bis zum XIII. Jahrhundert, Leipzig, 1892, էջ 75-76, **M. Ghazarian**, Armenien unter der arabishchen Herrschaft bis zur Enstehung des Bagratidenreiches, Zeitschrift fuer armenische Philologie, Marburg, 1903, էջ 54:

Հ. Մանանդյանը Աշոտի՝ 25-ամյա իշխանաց իշխանության շրջանը թվագրում է 862-887 թթ., իսկ թագավորությունը՝ 887/888-890/891 թթ.[1]։

Պետք է նշել, որ Յո. Մարկվարտն Աշոտի թագավոր հռչակվելու թվականը ճշտելու համար հիմք է վերցնում Թովմա Արծրունու հաղորդումները և մասնավորապես Գրիգոր Դերենիկ Արծրունու մահվան վերաբերյալ նրա տեղեկությունները։ Ըստ նրա՝ Թովմա Արծրունին Վասպուրականի իշխանի մահվան թվական է համարում 887-ը, երբ նա Աշոտին թագավոր է կոչում[2]։ Յո. Մարկվարտը և նրան հետևելով՝ նաև Կ. Մլակերը, Աշոտ Ա-ի թագադրությունը թվագրելով 887/888 թվականով[3], իսկ մահը՝ 890/891-ով[4], այնուհետև խնդիր են ունեցել ճշգրտելու Աշոտ Ա-ի թագավորության տարիների քանակը։ Խնդիրն այն է, որ Աշոտ Ա-ի մահվան և Սմբատ Ա-ի թագադրության թվականը կարծես թե կասկածի չեն ենթարկվում և թվագրվում են 890/891 թվականով։ Բացի այդ, Դվինի մեծ երկրաշարժը տեղի է ունեցել Սմբատ Ա-ի թագավորության 3-րդ տարում[5]։ Վերիիշյալ հեղինակներն առաջարկում են Թովմա Արծրունու կողմից Աշոտ Ա-ի թագավորությանը վերագրվող Դ (4) տարիները սրբագրել Գ-ի (3)։ Սակայն, Գրիգոր Դերենիկը մա-

---

[1] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր, Ե., 1960, էջ 39-40, 63-64։ Իր մեկ այլ աշխատության մեջ Հ. Մանանդյանը գրում է, որ Աշոտը գահ է բարձրացել 887/889 թ. (տե՛ս **Я. Манандян**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954, էջ 202։

[2] Տե՛ս **J. Markwart**, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen geographen,-«Հանդէս ամսօրեայ», 1915, թիվ 1-12, էջ 131-132։ Գրիգոր Դերենիկի մահը Լեոն ևս թվագրում է 887 թվականով (տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, հ. 2, էջ 524)։

[3] Հարկ է նշել, որ Աշոտ Ա-ն 887 թ. դրությամբ իշխանաց իշխան է կոչվում Լազարյան ճեմարանի Ավետարանում [տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր), էջ 40], որը Վ. Հակոբյանը վերագրում է լեզվի պահպանողական լինելու իրողությանը [տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդ.դ.)», հ. I, էջ 162]։

[4] Տե՛ս **J. Markwart**, Südarmenien und die Tigrisquellen, էջ 106, **K. Mlaker**, Zur chronologie Ašots I,-«Հանդէս ամսօրեայ», 1927, թիվ 11-12, 883-886։ Յո. Մարկվարտն իր մեկ այլ աշխատության մեջ Աշոտ Ա-ի մահը թվագրում է 890 թվականով (տե՛ս «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը ծանօթութիւններով», գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1913, էջ 64։

[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 354-360։

հացել է ոչ թե 887 թ., այլ ավելի վաղ, ուստի խախտվում է հետազոտողների քննության տրամաբանությունը[1]: Ստորև ցույց կտանք, որ Վասպուրականի իշխանն իրականում վախճանվել է 886 թ., որը կարևոր հետևություններ է ծնում[2]:

Հետազոտողներից վերջինը, որ մանրամասնորեն քննության է առել Աշոտի գահի բարձրանալու թվականը, Մ. Գրիգորյանն է: Նա հետազոտության է ենթարկում աղբյուրների տեղեկությունները և գալիս այն եզրակացության, որ հայկական աղբյուրների միակ արժանահավատ տեղեկությունը խնդրո առարկայի մասին պահպանել է Հովհաննես Դրասխանակերտցին՝ հստակ նշելով, թե Աշոտին թագ է բերել Արմինիայի ոստիկան Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանին: Ուսումնասիրողը քննության է առել ոստիկանի իշխանության տարիները և մահվան թվականը՝ նշելով, որ նա մինչև մահ եղել է ոստիկան և վախճանվել 883 թվականին: Նա տրամաբանական է համարում, որ ոստիկանը պետք է բերեր թագը նախքան 884 թ., ուստի, հավելելով նաև այն, որ վրացական աղբյուրում Աշոտը 881 թ. հիշատակված է որպես թագավոր[3], նա պետք է Հայոց թագավոր հռչակված լիներ 881-883 թթ. միջակայքում[4]:

Ուսումնասիրողների տեսակետների քննությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է կատարել Աշոտ Ա-ի թագավորության տարիների քանակի, ինչպես նաև Սմբատ Ա-ի թագավորության առաջին թվականի վերաբերյալ ճշգրտումներ, որոնք հնարավորություն կտան ընդհուպ մոտենալու խնդրի լուծմանը: Վերևում տեսանք, որ նման հաշվարկներ հետազոտողների կողմից գրեթե չեն իրականացվել, և հաճախ աղբյուրների տեղեկություններն ընդունվել են միանշանակ և կամ մերժվել

---

[1] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. II, էջ 159-160:

[2] Հ. Հարությունյանը և Վ. Վարդանյանը Գրիգոր Դերենիկի մահը դնում են 885 թ. (տե՛ս **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 30, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., h III, Ե., 1976, էջ 71, **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Ե., 1969, էջ 35-36):

[3] Մ. Գրիգորյանը սխալվում է, քանի որ «Քարթլիի մատյան»-ում Աշոտը թագավոր է հիշատակված նախքան 870 թ. կամ հենց 870 թ. տեղի ունեցած դեպքերի ժամանակ:

[4] Տե՛ս **Մ. Գրիգորյան**, Բագրատունյաց թագավորության սկզբնավորման թվագրության շուրջ,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 2012, թիվ 2-3, էջ 114-125:

ոչ այնքան հիմնավոր կերպով: Տեղեկություններ էլ կան, որոնք պարզապես քննության չեն առնվել, ինչպես, օրինակ՝ այն, որ աղբյուրների մի զգալի մասում Աշոտ Ա-ին վերագրվում է 7 տարվա թագավորություն:

## Գլուխ Գ
## ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Աշոտ Ա-ի թագավորության տարիների վերաբերյալ, ինչպես վերը տեսանք, կա երեք կարգի հիշատակություն: Աշոտ Ա-ն թագավորել է 4, 5 կամ 7 տարի՝ սկսած 884, 885 կամ 887 թվականներից: Ըստ որում՝ հետազոտողները քննության են առել Աշոտ Ա-ի՝ միայն 4 կամ 5 տարի թագավորելու տեղեկությունները, իսկ 7 տարի թագավորելու հիշատակությունն անտեսվել է՝ թերևս Ե ու Է տառերի՝ գրիչների կողմից հավանական շփոթությանը վերագրելով: Աշոտի՝ 7 տարի իշխելու վերաբերյալ տեղեկությունները պահպանվել են հիմնականում հիշատակարաններում և մանր ժամանակագրություններում: Այդ տեղեկությունները կարելի է վերագրել նաև ժամանակագիրների կատարած հաշվարկներին, երբ Աշոտ Ա-ի թագավորության տարիների քանակը հարմարեցվել է գոյություն ունեցող ժամանակագրական տվյալներին:

Անկախ այն բանից, թե ըստ պատմիչների որքան է տևել Աշոտի իշխանաց իշխան լինելը, այն սկսվել է 862 թ., քանի որ ոստիկանը, որ Աշոտին կարգել է իշխանաց իշխան, իշխել է հենց այդ թվականին[1]: Մյուս կողմից, հենց այդ թվականն են մատնանշում հայկական աղբյուրները՝ տեղեկացնելով, թե որքան ժամանակ էր անցել Արշակունյաց թագավորության վերացումից մինչև Բագրատունիների կողմից Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը: Այդ ելակետից հաշվարկելով՝ 884 թ. թագադրվելու դեպքում Աշոտի իշխանաց իշխան լինելու տևողությունը կազմում է 22, 885թ.՝ 23, 886 թ.՝ 24, իսկ 887 թ.՝ 25 տարի:

Քանի որ պատմիչների երկերում և մնացյալ աղբյուրներում Աշոտի իշխանաց իշխանի պաշտոնը վարելու տևողությունը նշված է 25 տարի, ապա դա վկայում է նրա՝ 887 թ. թագադրվելու օգտին: Մյուս կողմից, այդ թվականին գումարելով նրան վերագրվող՝ թագավորելու 5 տարիները՝ մենք կհասնենք 891/892 թ., որը որոշ վերապահումով կա-

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 127:

րող է համապատասխանել Թովմա Արծրունու կողմից նշվող՝ Աշոտ Աի մահվան թվականին (հայոց 339 թ.՝ 890 թ. ապրիլ-891 թ. ապրիլ): Սակայն նույն Թովմա Արծրունին Աշոտ Ա-ին վերագրում է 4 տարվա թագավորություն: Բացի այդ՝ այնպիսի մի արժեքավոր աղբյուր, ինչպիսին Ասողիկի «Պատմութիւն»-ն է, Աշոտին վերագրում է 32 տարվա իշխանություն ու 5 տարվա թագավորություն և գահակալության առաջին տարի համարում 887 թվականը: Փաստորեն՝ ի տարբերություն Թովմա Արծրունու, որն Աշոտի իշխանության սկիզբը համարում է 857 թվականը՝ այդպիսով նրան վերագրելով ընդհանուր առմամբ 30 տարվա իշխանություն և իշխանաց իշխանություն, Ասողիկը նրա իշխանության տարիների հաշվարկը կատարում է 855 թ. սկսած, ուստի Աշոտի իշխանության և իշխանաց իշխանության ընդհանուր տարիների քանակը մինչև 887 թվականը հաշվվում է 32 տարի: Այդ պարագայում Աշոտ Ա-ի մահն ընկնում է 891 թ., համապատասխանաբար այդ թվականին է հաստատվում նաև Սմբատ Ա-ի գահակալության առաջին թվականը:

Հարցի լուծմանը կարող է նպաստել Աշոտ Ա-ի որդու և հաջորդի՝ Սմբատ Ա-ի թագավորության առաջին տարվա ճշգրտումը, քանի որ դա կնպաստի Աշոտի մահվան թվականի հստակեցմանը: Այս հարցում ևս հետազոտողների կարծիքները չեն համընկնում: Այդ ճշգրտումը հնարավորություն կտա հետհաշվարկ կատարելու և ստացված արդյունքը գոյություն ունեցող տեղեկությունների հետ համադրելու միջոցով հանգելու որոշակի եզրակացության:

Արդ՝ փորձենք ճշտել Սմբատ Բագրատունու թագադրության թվականը: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից՝ Սմբատը ներկա չի եղել Աշոտ Ա թագավորի թաղմանը, քանի որ գտնվում էր Գուգարքում[1]: Հոր մահվան լուրը ստանալով՝ նա վերադառնում է, սակայն գժտվում հորեղբոր՝ Աբասի հետ: Աբասը ձերբակալել էր Կղարջքի Ատրներսեհ իշխանին: Կաթողիկոսի միջնորդությունն ի զուր է անցնում, Ատրներսեհն ազատ չի արձակվում, որի հետևանքով Սմբատը հեծելազորով գրոհում է Աբասի տիրույթների

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 446:

վրա: Հետո հաշտություն է լինում, և Աբասն Ատրներսեհին ազատ է արձակում: Այնուհետև Ատրպատականի Աֆշին ամիրան խալիֆայի հրամանով թագավորական թագ է բերում Սմբատին: Հովհաննես Դրասխանակերտցին այս իրադարձությունները նկարագրում է համառոտ, մեկ շնչով՝ միայն հավելելով, որ Սմբատի և Աբասի հակամարտությունը տևել է «բազում աւուրս»[1]:

Վերևում բերված աղբյուրները, ինչպես տեսանք, հաղորդում են, որ Աշոտ Ա-ն վախճանվել է հայոց ՅԼԹ/339 թվականին (890 թ. ապրիլ - 891 թ. ապրիլ), հետևաբար Սմբատը գահ է բարձրացել այդ նույն և կամ ՅԽ թվականին (891 թ. ապրիլ – 892 թ. ապրիլ): Սանահինի հիշատակարանում և Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության մեջ Սմբատ Ա-ի թագադրության թվական է համարվում հայոց ՅԽ թվականը[2]:

Ա. Տեր-Ղևոնդյանը թեև նշում է, որ Սմբատ Ա-ն թագավորել է 890-913 թթ., սակայն հավելում է, որ Աֆշինը նրան թագ է բերել 892 թվականին[3]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ Սմբատ Ա-ի թագավորությունը սկիզբ է առել 891 թվականին[4]:

Սմբատի թագադրության թվականը ճշտելուն կարող է նպաստել Դվինի երկրաշարժի ժամանակի ճշգրտումը, քանի որ հայտնի է, որ այն տեղի է ունեցել Սմբատ Ա-ի գահակալման երրորդ տարում[5]: Պատմագիտության մեջ ամրացած է այն տեսակետը, որ Դվինի երկրաշարժը տեղի է ունեցել 893 թ.[6]: Նշված դեպքերի ժամանակակից Մաշտոց Եղիվարդեցու վարքում հստակեցվում է երկրաշարժի տեղի ունենալու ամսաթիվը՝ հայոց ՅԽԲ թվականի հրոտից ամսվա ԺԶ-ն

[1] Նույն տեղում, էջ 447-448:

[2] Տե՛ս «Յիշատակարան Սանահնոյ վանից», էջ 50, «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIIIդդ.)», հ. II, էջ 336:

[3] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 240, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ III, էջ 27:

[4] Տե՛ս **H. Thopdschian**, Politische und Kirchengeschichte Armeniens unter Asot I und Smbat I,-"Mitteilungen des Seminars fur Orientalische Sprachen", Westasiatische Abt. 8, 1905, էջ 166:

[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 354-360:

[6] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ III, էջ 30, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 463 և այլն:

(16), հինգշաբթի[1]: ՅԽԲ թվականի (893 թ. ապրիլ-894 թ. ապրիլ) հրոտից ամսվա 16-ը համապատասխանում է 894 թ. մարտի 28-ին, որն իրոք հինգշաբթի էր[2]: Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ Դվինի երկրաշարժը տեղի է ունեցել հիջրայի 280 թ. (23 մարտ, 893 թ.-12 մարտ, 894) շավալ ամսին (14 դեկտեմբեր, 893 թ.-11 հունվար, 894 թ.)[3]: Անկախ ամսաթվից, թեև Մաշտոց Եղիվարդեցու վարքի տեղեկություններին կասկածելու հիմքեր չունենք, խիստ հավանական է, որ երկրաշարժը տեղի է ունեցել 894 թվականին[4]: Այդ դեպքում Սմբատ Ա-ի թագավորության առաջին տարին ստացվում է 891/892 թվականը: Ավարտվում էր հայոց ՅԽԲ թվականը, որը, եթե Սմբատ Ա-ի երրորդ տարին է, ապա երկրորդը՝ ՅԽԱ-ն (341) է, իսկ առաջինը՝ ՅԽ-ն (340): Վերջինս սկսվել է 891 թ. ապրիլին և ավարտվել 892 թ. ապրիլին: Ի դեպ, չենք կարող համաձայնել Ա. Տեր-Ղևոնդյանի այն կարծիքին, որ Սմբատ Ա-ն խալիֆայից թագ է ստացել գահ բարձրանալուց 2 տարի անց, չնայած որ դա խնդրի լուծման համար հիմք չէ: Հայկական աղբյուրները, ամենայն հավանականությամբ, արձանագրել են գահի բարձրանալը և ոչ թե խալիֆայից թագ ստանալը, թեև դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից՝ Սմբատ Ա-ի պարագայում դրանք տեղի են ունեցել միաժամանակ: Մյուս կողմից, Սմբատը գահ է բարձրացել հոր մահից որոշ, բայց ոչ երկար ժամանակ անց, ամենայն հավանականությամբ, նույն թվականին:

Եթե Սմբատը գահ է բարձրացել հայոց ՅԽ թվականին, այսինքն՝ 891 թ. ապրիլից հետո, ապա ե՞րբ է մահացել Աշոտ Ա-ն: Պատ-

---

[1] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», էջ 41, հմմտ. «Էջմիածին», 2011, Բ, էջ 68:

[2] Մեր հաշվարկը կատարել ենք ըստ Բ. Թումանյանի տոմարական հաշվումների աղյուսակների (տե՛ս **Բ. Թումանյան**, Տոմարական հաշվումներ, էջ 55-60):

[3] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, Արաբական աղբյուրներ, Բ, **Իբն ալ-Ասիր**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981, էջ 171-172:

[4] Տե՛ս **Ա. Քալանթարյան**, **Կ. Ղաֆադարյան**, Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ժամանակագրության որոշ հարցեր,-«ՊԲՀ», 1990, թիվ 1, էջ 142:

մագիտության մեջ ընդունված է 890 թվականը[1]: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունից՝ Աշոտ Ա-ին թաղել են նախքան Սմբատի ժամանելը: Խնդիրն այն է, որ ըստ պատմիչի՝ Սմբատն այդ ժամանակ «նվաճում» էր (իմա՛ ազատագրում էր) Գուգարքը[2]: Եթե իրոք ճիշտ է այն, որ Սմբատ Ա-ն թագադրվել է 891 թ. ապրիլից հետո՝ հոր թաղմանը բացակայելուց և այնուհետև Աբասի դեմ «բազում աւուրս» պատերազմելուց հետ, ապա Աշոտ Ա-ի մահը պետք է տեղի ունեցած լիներ 890/891 թ. ձմռանը: Լեռնոտ և ձյունածածկ Գուգարքից Սմբատը միայն դժվարությամբ կարող էր ժամանել հոր թաղմանը, ուստի և ուշացել է, ըստ որում՝ երկար, քանի որ թաղումն արել են առանց նրա, ավելին, բավականաչափ, որպեսզի Աշոտ Ա-ի գահի համար հավակնորդ հանդես գա ի դեմս Աբաս սպարապետի: Վերևում տեսանք, որ Թովմա Արծրունին Աշոտ Ա-ի մահը դնում է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի հայրապետության 15-րդ տարում: Եթե 876 թ. համարենք կաթողիկոսի գահակալության առաջին տարի[3], ապա 15-րդ տարին կլինի 891 թվականը: Կարող ենք համոզված ասել, որ Աշոտ Ա-ն վախճանվել է 891 թ. սկզբին:

Դրա ապացույցն է նաև Ղ. Ալիշանի և Մ. Օրմանյանի այն ճշտումը, որ Աշոտ Ա-ն կյանքին հրաժեշտ է տվել 891 թ. փետրվարի սկզբին:

Աշոտ Ա-ի՝ 891 թ. վախճանվելու և Սմբատ Ա-ի՝ նույն թվականին գահ բարձրանալու փաստն են ապացուցում նաև այլ իրողություններ: Հովհաննես Դրասխանակերտցին մի ուշագրավ վկայություն ունի այն մասին, որ Աբաս սպարապետը Սմբատից պահանջել է, որպեսզի իր կողմից ձերբակալված Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհն իրեն հանձնի իր քրոջ ամուսին Գուրգենից խլված երկու ամրոց[4]: Եթե չենք սխալվում, այդ վկայությունը նախկինում քննության չի առնվել:

---

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ III, էջ 26, **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 240 և այլն:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 446:

[3] Տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 475:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 447: Պետք է նշել, որ Հայոց սպարապետ Աբասը մինչ այդ դեպքերն ամուսնացած էր Կղարջքի Ատրներսեհ Կուրապաղատի դստեր հետ: Դատելով Կարսի Առաքելոց եկեղեցու մոտակայքում հայտնաբերված մի

Որտե՞ղ կարող էր Ատրներսեհը ամրոցներ խլել, եթե ոչ միայն Գուգարքում, և ո՞ր Գուրգենի մասին է խոսքը, եթե ոչ միայն Կղարջքի Բագրատունիների ներկայացուցչի:

Հայտնի է, որ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհի որդի Գուրգենը 881 թ. մարտնչում էր Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի և նրա հովանավոր իշխանաց իշխան Աշոտի դեմ՝ միանալով Գվարամ ու Նասր Բագրատունիների և աբխազաց թագավորի դաշինքին[1]: Նման երկրորդ հակամարտության ժամանակ, որը տեղի ունեցավ 888 թ.՝ արդեն Աշոտ Ա-ի գահակալության շրջանում, Գուրգենը միացավ հակառակորդ դաշինքին[2]:

Ըստ Դավիթի որդի Սմբատի՝ Գուրգենը Տայքի Կալմախ ամրոցից տեղափոխվել էր Ծավշք և Արտահան: Նա թշնամացավ Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի հետ և պայքարեց նրա դեմ: 891թ. Արտահանի սահմանին տեղի ունեցած ճակատամարտում նա պարտվեց և սպանվեց[3]:

Ամենայն հավանականությամբ, սա այն Գուրգենն է, որի մասին հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին[4]: Եթե ճշգրիտ է մեր դիտարկումը, ապա նրա երկու ամրոցները 891 թ. անցել էին Ատրներսեհին, որոնք էլ պահանջում էր Աբասը:

Նման նույնացման արդյունքը համապատասխանում է մեր այն եզրակացությանը, ըստ որի՝ Սմբատ Ա-ն գահ է բարձրացել 891 թ. ապրիլից հետո[5]:

---

արձանագրությունից, որտեղ գրված է, թե «... [Բ]ագրատունի, դուստր Ատրներսեհի [իշխ]անի և ամուսին Աբասա[յ] Հայոց [սպարապե]տի, որ գնաց կեսաւ[րեայ]», Ատրներսեհի դուստրը մահացել է վաղաժամ (տե՛ս **С. Тер-Аветисян**, О раскопках в Карсе и новооткрытой армянской надписи IX в.,-“Известия Кавказского историко-археологического института в Тифлисе”, т. III, Тифлис, 1925, էջ 121-128):

[1] Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 64:

[2] Նույն տեղում, էջ 65:

[3] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, История и повествование о Багратионах, пер. М. Лордкипанидзе, Тб., 1979, էջ 34: Տե՛ս նաև «Քարթլիի մատյան», էջ 64-65:

[4] Տե՛ս **M. Brosset**, Histoire de la Georgie, I-re partie, S.-Petersbourg., 1849, էջ 274:

[5] Ն. Ադոնցը, որ Աշոտ Ա-ի մահը դնում է 890 թ. (տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, Ե., 2012, էջ 369), Սմբատ Ա-ի թագավորության առաջին տարի է համարում 891 թվականը (նույն տեղում, էջ 190):

Այստեղ հարկ ենք համարում քննության առնել Թովմա Արծրունու և Անանուն պատմիչի մի քանի հիշատակություններ, որոնք մի կողմից ապացուցում են Աշոտ Ա-ի՝ 891 թ. վախճանվելու տեսակետը, իսկ մյուս կողմից ցույց տալիս, որ Վասպուրականի իշխան Գրիգոր Դերենիկը, որի կենդանության օրոք Աշոտն իբր արդեն թագավոր էր հռչակվել, մահացել է 886 թ.[1]: Բացի այդ՝ դրանք բացահայտում են Աշոտ Ա-ի օրոք տեղի ունեցած մի շարք կարևոր իրողություններ: Վերևում տեսանք, որ փորձ է կատարվել Գրիգոր Դերենիկի մահը թվագրելու 887 թվականով: Իսկ Վ. Վարդանյանը հակված է Գրիգոր Դերենիկի մահը դնելու 884 թ. վերջերին կամ 885 թ. սկզբներին, չնայած այդ դեպքում խախտվում է Արծրունյաց պատմիչի ներքոբերյալ հիշատակությունների ժամանակագրական համակարգը: Խնդիրն այն է, որ Վ. Վարդանյանն այդ հիշատակությունների հիման վրա սկզբում հանգել է 886 թվականին, սակայն այնուհետև փորձել խնդիրը լուծել՝ Գրիգոր Դերենիկի որդի Աշոտի ծննդյան և մահվան թվականների վերաբերյալ Թովմա Արծրունու երկու տարբեր տեղեկությունները հաշվի առնելով: Դրա հիման վրա նա կարծիք է հայտնում, որ Դերենիկը մահացել է 885 թվականին[2]: Թովմա Արծրունին սկզբում հայտնում է, որ Գրիգոր Դերենիկի որդի Աշոտը ծնվել է հայոց 326 թ. (877), իսկ վերջինիս եղբայր Գագիկը՝ հայոց 328 թ. (879)[3], իսկ մեկ այլ հիշատակության մեջ նշում, թե Աշոտը ծնվել է հայոց 325 թ. (876)[4]: Գրիգոր Դերենիկի մահվան ժամանակ Աշոտը 9 տարեկան էր, իսկ Գագիկը՝ 7[5]: Պատմիչի հիշատակության քննությունը ցույց է տալիս, որ ճիշտ է Աշոտի ծննդյան վերաբերյալ առաջին հիշատակությունը, քանի որ Գրիգոր Դերենիկի մահվան վերաբերյալ տեղեկության մեջ երկու եղբայրների տարիքների միջև նշված է 2 տարվա տարբերություն, ինչպես և առաջին հիշատակության մեջ նշված ծննդյան թվականների միջև է: Այլապես տարբերությունը կկազմի 3 տարի:

---

[1] Տե՛ս **Մ. Չամչեանց**, նշվ. աշխ., էջ 704-705:
[2] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 35-36:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 338:
[4] Նույն տեղում, էջ 384:
[5] Նույն տեղում, էջ 354:

Հաշվարկը ցույց է տալիս, որ Գրիգոր Դերենիկը մահացել է 886 թվականին: Սակայն Անանուն պատմիչը, խոսելով Աշոտ Արծրունու՝ հոր մահից հետո Վասպուրականի իշխանությունը ստանձնելու մասին, նշում է, որ նա այդ ժամանակ գրեթե 12 տարեկան էր[1]: Բայց այս դեպքում նա նաև որոշակի հաշվարկ է ներկայացնում, որից պարզվում է, որ այդ հիշատակությունն իրականում վերաբերում է ոչ թե իշխանությունը ժառանգելու պահին, այլ, ամենայն հավանականությամբ, 889 թվականին, երբ նա իրոք 12 տարեկան էր:

Այնուհետև պատմիչը ներկայացնում է երկու տեղեկություն, որոնք պարզություն են մտցնում հիշատակության մեջ: Մասնավորապես, Աշոտի մայր Սոփին վախճանվեց դրանից 7 ամիս անց, իսկ վերջինիցս 1,5 տարի անց էլ մահացավ Հայոց թագավոր Աշոտ Ա-ն: Վերջինս, փաստորեն, մահացել է Աշոտ Արծրունու՝ 12 տարեկան եղած շրջանից ավելի քան 2 տարի հետո: Ինքնըստինքյան պարզ է, որ 877 թ. ծնված Աշոտը 12 տարեկան էր դառնալու 889 թվականին, որից էլ 2 տարի առաջ գնալով՝ կհասնենք 891 թ.: Այս հաշվարկը ևս հիմնավորում է այն, որ իրոք Աշոտ Ա-ն մահացել է 891 թվականին: Ինչ վերաբերում է այն իրողությանը, որ, ըստ Թովմա Արծրունու, Աշոտ Ա-ն մահացել է հայոց 339 թ., ապա պետք է հիշել, որ այդ թվականը սկսվել է 890 թ. ապրիլին և ավարտվել 891 թ. ապրիլին: Ուստի հիմք չկա միանշանակ կերպով պնդելու, որ Աշոտն ըստ Թովմա Արծրունու վախճանվել է հենց 890 թ., այլ վերոհիշյալը ցույց է տալիս, որ, ամենայն հավանականությամբ, Բագրատունի առաջին թագավորը կյանքին հրաժեշտ է տվել 891 թ. սկզբին[2]: Հարկ է հավելել, որ Ն. Ադոնցը, քննության առնելով Գրիգոր Դերենիկի մահվան թվականը, եկել է այն եզրակացության, որ նա մահացել է 886 կամ 887 թ., չնայած ի վերջո ձեռնպահ է մնացել այդ թվականներից որևէ մեկի վրա կանգ առնելուց[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 416:

[2] Հարկ է նշել, որ Թովմա Արծրունու աշխատության թարգմանության մեջ Վ. Վարդանյանն Աշոտ Ա-ի մահվան՝ հայոց ՅԼԹ թվականի կողքին հավելել է 890 թ. (տե՛ս նույն տեղում, էջ 356): Սակայն նույն տեղում պատմիչը հաղորդում է, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի գահակալության 15-րդ տարում, որը 891 թվականն է (տե՛ս նույն տեղում):

[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 271:

Դերենիկ Արծրունու մահվան և դրան հաջորդած իրադարձությունների վերաբերյալ պատմիչների տեղեկությունները նպաստավոր են նաև Աշոտ Ա-ի մահվան թվագրման համար: Թովմա Արծրունին նախ նշում է, որ Դերենիկ Արծրունու մահվան կապակցությամբ 10 ամիս սուգ արեցին, որից հետո նրան Աշոտ թագավորի հրամանով փոխարինեց որդին՝ Աշոտը[1]: Վերջինս հոր մահվան պահին 9 տարեկան էր[2]: Դերենիկը սպանվել է իշխանական ծմեռոց մեկնելու ճանապարհին[3]: Սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ Դերենիկը սպանվել է 886 թ. աշնանը: Այդ է վկայում Անանուն Զրուցագիրը: Պատմիչը, սխալմամբ տեղի ունեցած դեպքերը նկարագրելով Սմբատ Ա-ի թագավորության շրջանում, հաղորդում է, որ «յորժամ հասան աւուրքն աշնան՝ աջողեցաւ [Դերենիկը] գնալն ի քաղաքն ի Հեր», որտեղ և սպանվեց[4]: Այս տեղեկությունը հաստատվում է Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու և Անանուն պատմիչի տեղեկություններով[5]: 886 թ. աշնանը գումարելով սգի 10 ամիսը՝ հասնում ենք 887 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսները: Աշոտ Արծրունին այդ ժամանակ արդեն 10 տարեկան էր:

Այնուհետև Արծրունյաց պատմիչը ներկայացնում է ևս մեկ հույժ կարևոր և հստակ տեղեկություն: Դերենիկի մահից հետո նրա տիկինը՝ Սոփին ապրեց 1 տարի և 8 ամիս[6]: Եթե Դերենիկի մահը տեղադրենք 886 թ. աշնանը և դրան ավելացնենք 20 ամիս, կհասնենք 888 թ. մայիս-հուլիս ամիսները, ըստ որում՝ 886 թ. սեպտեմբերից հաշվելով՝ կհասնենք 888 թ. մայիս, հոկտեմբերից հաշվելով՝ 888 թ. հունիս, իսկ նոյեմբերից հաշվելով՝ 888 թ. հուլիս: Այդ ժամանակ նրա որդի Աշոտն ար-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 354:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 352:

[4] Տե՛ս «Պատմութիւն **Անանուն Զրուցագրի** (կարծեցեալ Շապուհ Բագրատունի)», թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի [“История Анонимного Повествователя (Псевдо-Шапух Багратуни)”], Ե., 1971, էջ 165:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 444-445, **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 352, էջ 408-412:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 356:

դեն բոլորել էր 11 տարին: Ստացվում է, որ Սոփին մահացել է 888 թ. մայիս-հուլիս ամիսների միջակայքում:

Այժմ տեսնենք, թե նույն դեպքերի մասին ինչ է պատմում Անանուն պատմիչը: Ըստ պատմիչի՝ Սոփին մահացել է 7 ամիս անց այն ժամանակից, երբ որդին գրեթե 12 տարեկան էր[1]: Պատմիչը հավելում է, որ մինչև որդու իշխան դառնալն Աշոտ արքայի օգնությամբ հենց Սոփին էր վարում Վասպուրականի իշխանությունը[2]: Այսինքն՝ արդեն հավանաբար որդու 12 տարին լրանալուց հետո: Խոսքը մի դեպքում 888 թ., իսկ մյուս դեպքում՝ 889 թ. մասին է: 888 թ. Աշոտը 11 տարեկան էր, իսկ 889 թ.՝ 12 տարեկան:

Հաշվարկն ամբողջացնելուն նպաստում է հետևյալը: Ըստ Անանուն պատմիչի՝ Սոփի մահից մեկուկես տարի (18 ամիս) անց վախճանվել է Աշոտ թագավորը[3]: Ստացվում է, որ նա մահացել է Աշոտ Արծրունու՝ 12 տարին բոլորելու շրջանից մի փոքր ավելի, քան 2 տարի անց (7 ամիս և 18 ամիս՝ ընդհանուր առմամբ՝ 25 ամիս): Եթե հիմք ընդունենք Աշոտ արքայի մահվան՝ մեր ճշգրտած ժամանակը, այսինքն՝ 891 թ. առաջին երեք ամիսները և դրանցից ետ գնանք 25 ամիս, կհասնենք 889 թ. առաջին երեք ամիսները: Այս հաշվարկով ստացվում է, որ Սոփին մահացել է 889 թ. հունվար-մարտ ամիսների միջակայքում:

Ինչպես տեսնում ենք, Սոփիի մահվան հետ կապված հաշվարկը մի դեպքում մեզ հասցնում է 888 թ. մայիս-հուլիս ամիսները, իսկ մյուս դեպքում՝ 889 թ. հունվար-մարտ ամիսները: Մայիսից հաշվելով՝ տարբերությունը կազմում է 8-10 ամիս, հունիսից հաշվելով՝ 7-9 ամիս, իսկ հուլիսից հաշվելով՝ 6-8 ամիս: Միակ հավանական տեսակետն այն է, որ Դերենիկի մահից 20 ամիս անց Սոփիի մահանալու վերաբերյալ հիշատակության մեջ սխալ կա, իրականում 20 ամիսներին պետք է հավելել Դերենիկի մահվան առիթով տեղի ունեցող սգո 10 ամիսները, այսինքն՝ ընդունելով, որ Սոփին մահացել է ամուսնուց ոչ թե 20, այլ 30 ամիս անց: Այս պարագայում պետք է ընդունենք, որ Դերենիկի մահը տեղի է ունեցել 886 թ. սեպտեմբերին, որին գումարելով 30 ամիս՝

---

[1] Նույն տեղում, էջ 416:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 418:

կիասնենք 889 թ. մարտ ամսին: Ի դեպ, այդ է ապացուցում Անանուն Զրուցագրի վերոհիշյալ հաղորդումը, թե «եկաց զամռան աւուրքն ի աշխարհին իւր ի Վասպուրական և յորժամ հասան աւուրքն աշնան՝ աջողեցաւ [Դերենիկը] գնալն ի քաղաքն ի Հեր»[1], այսինքն՝ հստակորեն այդ իրադարձությունները դնելով աշնան սկզբին: Մեր կարծիքով՝ սխալվել է Յո. Մարկվարտը՝ կարծիք հայտնելով, թե Դերենիկը սպանվել է ուշ աշնանը, քանի որ, ըստ նրա, Վասպուրականի իշխանը ձմեռոց պետք է գնար ձմեռնամուտին[2]: Վերոասացյալի հիմքով կարող ենք պնդել, որ Սոփին մահացել է 889 թ. մարտին, երբ որդին արդեն 12 տարեկան էր և ստանձնել էր Վասպուրականի իշխանությունը:

Մյուս հարցը, որ հաճախ առկա է Աշոտ Բագրատունու գահի բարձրանալը թվագրելիս, այն է, որ Վասպուրականի Դերենիկ իշխանը Հովհաննես Դրասխանակերտցու կողմից հիշատակվում է Աշոտի թագավոր դառնալը նկարագրելուց հետո[3]: Թովմա Արծրունին սակայն Աշոտին առաջին անգամ թագավոր է հիշատակում Դերենիկի մահվանից հետո: Մահվան հանգամանքները նկարագրելիս պատմիչը նշում է, որ Դերենիկին հայտնի էր, որ իշխանաց իշխան Աշոտը ծուղակ է պատրաստել: Ապա Դերենիկը սպանվում է, որից հետո 10 ամիս սուգ է հայտարարվում: Դրանից հետո գալիս է Աշոտի որդի Սմբատը և իշխանությունը հանձնում Դերենիկի որդի Աշոտին: Վերջին տեղեկության մեջ Աշոտ Բագրատունին հիշատակված է որպես թագավոր[4]: 886 թ. սեպտեմբերից, երբ սպանվեց Դերենիկը, հաշվելով 10 ամիս, հասնում ենք 887 թ. հուլիս: Աշոտը պետք է թագադրված լիներ Դերենիկի սպանությունից հետո՝ մինչև 887 թ. հուլիսը (ներառյալ): Կարելի է ենթադրել, որ Հովհաննես Դրասխանակերտցին, իր աշխատությունը շարադրելով տեղի ունեցած իրադարձություններից շուրջ 40 տարի անց, պարզապես շփոթել է իրադարձությունների ժամանակագրական հերթականությունը:

---

[1] **Անանուն Զրուցագիր**, էջ 165:

[2] Տե՛ս **J. Markwart**, Südarmenien und die Tigrisquellen, էջ 132:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 443-444:

[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 352-354:

Վերոհիշյալի օգտին է խոսում այն, որ Աշոտը 887 թ. դրությամբ իշխանաց իշխան է կոչվում նաև Լազարյան ճեմարանի Ավետարանում[1]:

Մնում է եզրակացնել, որ Աշոտ Ա-ն թագավորել է 890 թ. ամբողջ ընթացքում՝ վախճանվելով 891թ. սկզբին: 891 թվականը նրա գահակալման վերջին տարին էր, որը, եթե հինգերորդն էր, ապա 887 թվականն էլ առաջինն էր:

Դատելով «Յայսմաւուրքի»՝ Աշոտ Ա թագավորի վերաբերյալ «աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի հասակի եօթանասուն և մի ամաց» տեղեկությունից[2]՝ կարելի է վստահորեն ասել, որ Աշոտ Ա-ն մահացել է 71 տարեկան հասակում[3]:

Հետագա պարզաբանումների համար անհրաժեշտություն է առաջանում քննության առնելու նաև Աշոտ Բագրատունու՝ իշխան և իշխանաց իշխան եղած տարիների հարցը: Հարկ է պատասխանել մեկ կարևոր հարցի, թե ինչու է աղբյուրներից որոշներում 862 թվականից սկսած Աշոտ Բագրատունու իշխանությունը հաշվարկվում 25 տարի, իսկ մյուսներում՝ ավելի կամ պակաս: Ըստ որում՝ կախված Աշոտի գահի բարձրանալու թվագրման հետ՝ տարբեր հեղինակներ տարբեր թվեր են ներկայացնում՝ կատարելով սեփական հաշվարկը և հարմարեցնելով թվերը: Գրիչների վրա ազդեցություն է թողել նաև այն, որ աղբյուրներում Աշոտի իշխանության հետ կապված երեք կարգի թվեր գոյություն ունեն՝ իշխանության, իշխանաց իշխան լինելու և գահակալության: Պատմագիտության մեջ ընդունված է, որ Աշոտի իշխանությունը սկիզբ է առել 855 թ.[4], իսկ իշխանաց իշխանի պաշտոնն նա ստա-

---

[1] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», էջ 40:

[2] «Յայսմաւուրք», էջ 234:

[3] Տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 510-513:

[4] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ III, էջ 16-17, **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 150 և այլն: Բալազուրիի հաղորդմամբ՝ Խալիֆայության Բուղա զորավարը Հայաստանից հեռացել է հիջրայի 241 թ. (22 մայիս 855 թ.-9 մայիս 856 թ.) (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 282): Ըստ Թովմա Արծրունու՝ Բուղան հայ գերիներին Սամարա տանելուց առաջ սպարապետ Սմբատի որդի Աշոտին և նրա եղբայրներին թողեց «տիրել աշխարհին իւրեանց» (**Թովմա Արծրունի և**

ցել է, ինչպես տեսանք, 862 թվականին: Վերևում ներկայացված հիշատակություններում Աշոտին հիմնականում վերագրվում է 5 տարվա իշխանություն և 25 տարվա իշխանաց իշխանություն: Սակայն, այդ թվերը միմյանց հետ հաշտեցնելը բարդություն է պարունակում: Նախ, մինչև 862 թվականը Աշոտն իշխել է ոչ թե 5, այլ առնվազն 7 տարի (ի դեպ, հենց այս կերպ է հաշվարկ կատարել Հ. Հարությունյանը՝ նշելով, որ Աշոտն իշխան է եղել 7 և իշխանաց իշխան 23 տարի[1]):

Դեպքերի ժամանակակից Թովմա Արծրունին հաղորդում է, որ Աշոտն իշխան և իշխանաց իշխան է եղել 30 տարի: Պատմիչի հաշվարկները ցույց են տալիս երկու կարևոր իրողություն: Ըստ պատմիչի՝ Աշոտը իշխան է եղել 5 և իշխանաց իշխան 25 տարի: Եթե Աշոտի իշխանաց իշխան դառնալու 862 թվականին գումարենք 25 տարի, կստացվի 887 թվականը: Այսինքն՝ Թովմա Արծրունին Աշոտի իշխանության շրջանը 7-ի փոխարեն ավելի քիչ է ներկայացրել՝ 5 տարի: Պատճառը, մեր կարծիքով, հետևյալն է: Գերությունից հայոց իշխանների վերադարձը պատմիչը դնում է մոտ 857 թ., ուստի հավանորեն հենց այդ թվականն էլ համարել է Աշոտի իշխանության սկիզբ, քանի որ վերադարձածներն ընդունեցին նրա իշխանությունը[2]: 857 թվականից մինչև 862 թ. 5 տարի է:

Վերոհիշյալը, ինչպես նաև Դերենիկի ու Սոփիի մահվան վերաբերյալ տեղեկությունների քննությունը ցույց են տալիս, որ Թովմա Արծրունու աշխատության մեջ խնդրո առարկա դեպքերի վերաբերյալ ժամանակագրական տվյալները ճշգրիտ են: Ուստի՝ արձանագրենք, որ Աշոտ Բագրատունու թագավորությունը սկիզբ է առել 887 թ.՝ 25 տարի իշխանաց իշխանի պաշտոնը վարելուց հետո: Աշոտի՝ 887 թ. թագադրվելու իրողությունն արտացոլված է նաև Մովսես Դասխուրանցու աշխատության մեջ, որը, ինչպես տեսանք, օգտվել է դեպքերի ժամանակակից Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկից: Այդ է փաս-

---

**Անանուն**, էջ 298): Ն. Ադոնցը կարծում է, որ Բուղան հեռացել է Հայաստանից 855 թ., ուստի՝ Աշոտի իշխանության առաջին տարին 856 թվականն է (տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 458):

[1] Տե՛ս **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 29-30:

[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 312-314:

տում նաև այն, որ Շապուհ Բագրատունու երկում, դատելով դրանից օգտված հեղինակների կողմից հայոց 336 (887/888) թվականը որպես Աշոտ Բագրատունու՝ թագավոր հռչակվելու տարեթիվ ներկայացնելու իրողությունից, նշված է եղել հենց այդ թվականը:

Հարկ է անդրադառնալ այն իրողությանը, որ Թովմա Արծրունին Աշոտ Ա-ին վերագրում է 4 տարվա թագավորություն: Ի սկզբանե նշենք, որ կասկածի ենթարկել նման հույժ կարևոր տեղեկությունը և հատկապես այն բանից հետո, երբ համոզվեցինք, որ պատմիչի հաղորդած տեղեկությունները մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ ճշգրիտ են, այնքան էլ ճիշտ չէր լինի: Խնդիրն այն է, որ նա խնդրո առարկա իրադարձությունների ժամանակակիցն է, ուստի՝ վստահելի: Պատմիչը խիստ հետևողական է իր տեղեկությունների հարցում: Հարկ է հիշել նաև այն, որ իր աշխատության սկզբում նա դիմում է Դերենիկ Արծրունուն՝ նշելով, որ նրա հանձնարարությամբ է գրում իր աշխատությունը[1]: Կարելի է բխեցնել, որ, ի տարբերություն նշված դեպքերի մեկ այլ ժամանակակցի, Հովհաննես Դրասխանակերտցու, նա իր երկը չի շարադրել իրադարձություններից շատ տարիներ անց, այլ դրանց զուգընթաց, քանի որ եթե նա գրեր հետո, ապա դժվար թե ուղղակի դիմեր արդեն մահացած Դերենիկ Արծրունուն: Բացի այդ՝ պատմիչը, նկարագրելով Դերենիկի մահվան հանգամանքները, նույնպես զգացնել է տալիս, որ անմիջապես դրանից հետո է գրում[2]: Այդ իրողությունները բարձրացնում է նրա տեղեկությունների արժեքը, որոնք փաստացիորեն համապատասխանում են իրականությանը: Եթե Աշոտի թագավորությունը սկսենք հաշվել 887 թ. ապրիլի 19-ից հետո, երբ սկսվեց հայոց ՅԼՁ/336 թվականը, ապա մինչև 891 թ. սկիզբը կստացվի շուրջ (ոչ լրիվ) 4 տարի: Ավելի ուշ ստեղծագործած Ասողիկը, հավանաբար, հաշվարկը կատարել է այլ կերպ: Ըստ երևույթին, նա Աշոտ Ա-ի թագավորության առաջին տարի է համարել 887 թվականը, երկրորդը՝ 888 թվականը, երրորդը՝ 889 թվականը, չորրորդը՝ 890 թվականը և հինգերորդը՝ 891 թվականը:

[1] Նույն տեղում, էջ 10:

[2] Նույն տեղում, էջ 350:

887 թ. Աշոտի թագադրության ժամանակը ճշտելու համար կարևոր է անդրադառնալ նաև Ասողիկի ներկայացրած ժամանակագրությանը: Ճշտված է, որ Նավասարդի 1-ից հետո տեղի ունեցած իրադարձության թվականը հռոմեական թվականի հետ նույնացնելու համար դրան պետք է գումարել 551, իսկ նավասարդի 1-ից առաջ տեղի ունեցածինը ճշտելու համար՝ 552[1]: Նման իրավիճակում խախտվում է հռոմեական և փրկչական թվականների միջև գոյություն ունեցող 2 տարվա տարբերությունը: Առաջին դեպքում հռոմեական և փրկչական թվականների տարբերությունը լինում է 3, իսկ երկրորդ դեպքում՝ 1 տարի[2]: Եթե վերոհիշյալի լույսով դիտարկենք Ասողիկի տեղեկությունները, կարող ենք արձանագրել հետևյալը: Պատմիչը, որը խնդրո առարկա իրադարձությունները ներկայացրել է թե՛ հռոմեական և թե՛ փրկչական թվականներով, Աշոտ Բագրատունու թագադրության՝ հռոմեական և փրկչական թվականներով թվագրումների միջև տարբերությունը նշել է 1 տարի, ուստի կարելի է պնդել, որ Աշոտը թագադրվել է հայոց ՅԼՁ (887) թվականի նավասարդի 1-ից, այսինքն՝ ապրիլի 19-ից հետո: Հաշվի առնելով Դերենիկ Արծրունու մահվան հանգամանքների վերաբերյալ մեր ներկայացրած ճշգրտումները՝ Աշոտ Բագրատունու թագադրությունը պետք է տեղի ունեցած լիներ 887 թ. ապրիլի 19-ից հուլիս (ներառյալ) միջակայքում, քանի որ հուլիսից սկսած Թովմա Արծրունին նրան այլևս որպես թագավոր է հիշատակում:

Փաստորեն՝ Աշոտ Բագրատունին գահ է բարձրացել 887 թ. ապրիլի վերջից մինչև հուլիսի վերջն ընկած ժամանակահատվածում և թագավորել մինչև 891 թ. սկիզբ: Այս թվագրումը ամրագրելու համար անհրաժեշտություն է առաջանում պատասխանելու դրանից ծագող մի շարք հարցերի:

Աշոտ Բագրատունու թագավորության սկզբնավորման հարցում պարզություն մտցնելու համար, մասնավորապես մեծ կարևորություն ունի նաև այն իրողությունը, թե ինչ դիրքորոշում ուներ Բյուզանդիայի կայսր Բարսեղ Ա-ն Հայոց թագավորության վերականգնման հարցում:

---

[1] Տե՛ս **Բ. Թումանյան**, Տոմարական հաշվումներ, էջ 56:

[2] Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Ներկա թվականի սկզբնավորությունը ըստ հայ տոմարագետների հաշվումների,-«ՊԲՀ», 1970, թիվ 3, էջ 100:

Վերջինիս և Աշոտի հարաբերությունները այնքան սերտ էին, որ նույնիսկ հիշատակություն է պահպանվել այն մասին, որ Բարսեղ Ա-ն Աշոտից թագ է խնդրել[1]: Անկախ այն բանից, թե որքանով է համապատասխանում այդ տեղեկությունն իրականությանը, այն վկայում է սերտ բարեկամության գոյության մասին: Այդ է փաստում նաև Հովհաննես Դրասխանակերտցին՝ նշելով, որ Աշոտը Բարսեղ Ա-ի համար սիրելի որդի էր և հաղորդակից նրա տերության բոլոր գործերին[2]: Ավելին, հայկական աղբյուրները այդ ամենը հաշվի առնելով՝ տեղեկացնում են, թե խալիֆայի ուղարկած թագի մասին տեղեկանալով՝ Բարսեղ Ա-ն Աշոտին թագ է ուղարկել[3], թեև Հովհաննես Դրասխանակերտցին այդ մասին լռում է: Ասողիկը նշում է, որ Աշոտի գահ բարձրանալը տեղի է ունեցել Բարսեղ Ա-ի օրոք և կամակցությամբ[4]: Հ. Բարթիկյանը կարծում է, որ իրականում Բյուզանդիայի կայսրը Աշոտին թագ չի ուղարկել, այլ միայն, որ «Բյուզանդիան դեմ չէր Հայոց թագավորության վերականգնմանը, դեմ չէր, որ հայերը նրանց (իմա՛ Բագրատունիներին-Ա.Ե.) թագավոր հորջորջեին»[5]:

Բայց Բարսեղ Ա կայսեր օրոք և կամակցությամբ Աշոտի թագավոր հռչակվելը 887 թ. անհամապատասխանություն է առաջացնում, քանի որ Բարսեղ Ա-ն մահացել է 886 թ.: Ն. Ադոնցը, իսկ նրանից հետո նաև բազմաթիվ ուսումնասիրողներ Աշոտի գահ բարձրանալը թվագրելիս մշտապես նշում են, որ այն չէր կարող տեղի ունենալ Բարսեղ Ա-ի մահից հետո, որը վրա էր հասել 886 թ. օգոստոսի 29-ին[6]: Խորամիտ Աշոտը խալիֆայից ստացված թագը գլխին դնելուց առաջ պետք է զգար կայսեր համաձայնության անհրաժեշտությունը, որը և հայցել է: Կայսրը համաձայնել է, ուստի և պատմիչները նշում են նրա «կամակցությունը»: Չի կարելի բացառել նաև այն, որ թագադրության հանդեսը, եթե այդպիսին եղել է, կարող էր տեղի ունենալ արդեն Բարսեղ Ա-ի

[1] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 85:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 444:
[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 85-86, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 80:
[4] Տե՛ս **Ասողիկ**, էջ 740:
[5] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., էջ 17:
[6] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 476:

մահից հետո, եթե ընդունենք, որ Աշոտի թագավոր դառնալուն նա համաձայնել է մահից առաջ: Այդ պարագայում առաջանում է մյուս հարցը: Եթե Աշոտը ստացել է կայսեր համաձայնությունը կամ «կամակցությունը», ինչո՞ւ է թագադրվել նրա մահից հետո՝ արդեն հաջորդ տարի՝ 887 թ.: Հավանաբար նա կայսեր համաձայնությունը ստանալուց հետո մինչև թագադրվելը ստացել է նրա մահվան լուրը, ուստի և մի փոքր ժամանակ էլ սպասել է՝ տեսնելու նրա հաջորդի՝ Լևոն Զ-ի (886-912) վերաբերմունքը Հայոց թագավորության վերականգնման հարցում: Իսկ անհանգստանալու առիթ Աշոտն ուներ: Պատահական չէ, որ խոսվում էր այն մասին, թե Բարսեղ Ա-ն դավադրության զոհ էր դարձել[1]: Նոր կայսրը դրան վերաբերվել է դրականորեն և պաշտոնապես ճանաչել Աշոտ Բագրատունու թագավորությունը: Ստացվում է, որ Բարսեղ Ա-ն Աշոտ Բագրատունուն որպես թագավոր է ճանաչել 886 թվականին:

Սակայն, մենք հակված չենք ժխտելու Բարսեղ Ա-ի օրոք Աշոտի թագադրության վերաբերյալ տեղեկությունները, ավելին, կարծում ենք, որ 884 թ. նա կազմակերպել է թագադրության հանդես: Մինչ վերջինիս քննությանն անդրադառնալը անհրաժեշտ է խոսել նաև այն պատճառների մասին, թե ինչու Աշոտը, խալիֆայից թագ ստանալով մինչև 884 թվականը, չշտապեց կազմակերպել թագադրության հանդեսը: Կարծում ենք, որ Բարսեղ Ա-ի հետ սերտ հարաբերություններ պահպանող Աշոտ Բագրատունին, թեև թագ էր ստացել խալիֆայից, սակայն սպասում էր կայսեր համաձայնությանը: Այլապես կայսրը կարող էր թշնամանալ Աշոտի հետ, որը վերջինիս ծրագրերի մեջ չէր մտնում: Իսկ այն, որ նշվածը խիստ իրական էր, ապացուցվում է այն իրողությամբ, որ հայկական աղբյուրներն Աշոտի թագադրության հետ կապված հիշատակում են Բարսեղ Ա-ի ուղարկած թագը կամ նրա «կամակցությունը»: 882-883 թթ. Բարսեղ Ա-ն ակտիվ հարձակողական քաղաքականություն էր իրականացնում Արաբական խալիֆայության դեմ Մալաթիայի և Տարսոնի ուղղությամբ՝ փորձելով ճեղքել արաբա-բյուզան-

[1] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». Բյուզանդական աղբյուրներ, Բ, **Կոստանդին Ծիրանածին**, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե., 1970, էջ 292-293, ծանոթ. 276:

դական սահմանային շրջանը: Եվ եթե 882 թ. Մալաթիայի մոտ կայսրը, հաջողության չհասնելով, կարողացավ նահանջել, ապա 883 թ. սեպտեմբերի 14-ին Տարսոնի մոտակայքում բյուզանդական բանակը ծանր պարտություն կրեց[1]: Ա. Վասիլևը և Ֆ. Ուսպենսկին նշում են, որ դրանից հետո Արևելքում Բարսեղ Ա-ն այլևս ռազմական գործողություններ չի իրականացրել, սակայն, իմանալով այն մասին, որ խալիֆան թագ է ուղարկել Աշոտ Բագրատունուն, փորձել է Հայաստանի և այսրկովկասյան երկրների տիրակալին իր կողմը քաշելով, ի դեմս նրա, Խալիֆայության դեմ դաշնակից ձեռք բերել[2]: Այս խիստ հավանական տեսակետը կարելի է հիմնավորել նրանով, որ այն լիովին համապատասխանում էր Աշոտի շրջահայաց քաղաքականությանը: Բարսեղ Ա-ին խալիֆայի ուղարկած թագի մասին, ամենայն հավանականությամբ տեղեկացրել է հենց Աշոտը և սպասել նրա արձագանքին: Արաբների դեմ պատերազմում պարտություն կրած կայսրը հավանություն է տվել Աշոտի թագադրությանը, ըստ ամենայնի՝ Տարսոնի ջախջախումից հետո: Մյուս կողմից, 884 թվականից ավելի վաղ Բարսեղ Ա-ն չէր կարող հավանություն տալ Աշոտի՝ խալիֆայի կողմից ուղարկված թագով թագադրությանն այն պարզ պատճառով, որ պատերազմում էր Խալիֆայության դեմ: Ուստի մեծ կարևորություն է ներկայացնում այն հարցի պարզաբանումը, թե հատկապես ո՞ր թվականին է կայսրը համաձայնություն տվել Աշոտի գահակալությանը:

Վերոհիշյալի լույսով անդրադառնալով Գրիգոր Մաշկևորի տեղեկությանը՝ նշենք, որ այն այնքան մանրամասն է, որ կասկածի տեղիք համարյա չի տալիս: Սակայն այդ դեպքում ինչպե՞ս հաշտեցնել մեր կատարած քննության արդյունքներն այդ տեղեկության հետ՝ նկատի ունենալով նաև Աշոտ Ա-ի թագավորության տարիների քանա-

[1] Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 169-170: Այդ դեպքերի մասին մանրամասնորեն տե՛ս **А. Васильев**, Политические отношения Византии и арабов за время Македонской династии (867-959),-“Записки историко-филологического факультета императорского С.-Петербургского университета”, часть LXVI, С.-Петербург, 1902, էջ 78-83, **Ф. Успенский**, История Византийской империи, т. 3, М., 2005, гл. IX [Период Македонской династии (867-1057)], The Cambridge History of Byzantine Empire, c. 500-1492, էջ 351-352:

[2] Տե՛ս **А. Васильев**, նշվ. աշխ., էջ 83, **Ф. Успенский**, նշվ. աշխ., գլ. IX:

կի խնդիրը: Եթե Աշոտ Ա-ի գահակալությունը հաշվենք 884 թվականից, ապա 891 թ., երբ նա վախճանվել է, կդառնա նրա թագավորության 7-րդ տարին: Կստացվի, որ Աշոտ Ա-ն թագավորել է սկսած 884 թ. օգոստոսի 26-ից մինչև 891 թ. սկիզբը, այսինքն՝ գրեթե 7 տարի: Հավանորեն այն հայկական աղբյուրները, որտեղ Աշոտին վերագրված է 7 տարվա թագավորություն, հաշվարկը կատարել են հենց Գրիգոր Մաշկևորի նշած թվականից: Մի կողմ թողնելով այն հավանականությունը, որ վերջինս կեղծված է կամ աղավաղված, փորձենք քննարկել դրա տեղի ունենալու հավանականությունը: «Կեղծիքի» պարագայում 884 թ. Աշոտի թագավոր դառնալու հարցը կարելի էր ընդհանրապես քննության չառնել, սակայն դեպքերի ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցին տեղեկացնում է, որ Աշոտին թագ է ստացել 883 թ. հուլիսի դրությամբ մահացած ոստիկանի միջոցով, որը ստիպում է լրջորեն վերաբերվել Գրիգոր Մաշկևորի տեղեկությանը: Վերջինիս գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ թագադրությունը, փաստորեն, տեղի է ունեցել այնպիսի մի օր, երբ եկեղեցին պատարագ չէր մատուցում: Այդ իրողությունը մտորելու տեղիք է տալիս: «Կեղծող» գրիչները պետք է որ հաշվի առնեին այդ իրողությունը, սակայն հատկապես նշել են այդ: Բոլոր դեպքերում Աշոտը պետք է խալիֆայի կողմից թագավոր ճանաչվեր հենց թագը ստանալու պահից՝ անկախ նրանից, թե երբ է կազմակերպել թագադրությունը: Մյուս կողմից, Աշոտը չէր կարող ձգձգել թագադրությունը, քանի որ խալիֆան կարող էր փոխել մտադրությունը: Բացի այդ՝ Բյուզանդիայի կայսրը, որը, անկասկած, դեռ ուշքի չէր եկել ծանր պարտությունից հետո, դժվար թե շուտափույթ համաձայներ դեպքերի այդպիսի ընթացքին: Ուստի՝ Աշոտ Բագրատունին սեփական թագադրությունը կազմակերպել է նախքան կայսեր համաձայնությունը ստանալը, բայց ընտրել այնպիսի մի օր, երբ այդ արարողությունն անցկացվել է անաղմուկ և առանց ավելորդ շքեղության: Գուցե հենց այդ պատճառով է, որ հայ պատմիչների երկերում այդ թվականին Աշոտի թագադրության մասին խոսք չկա: Այլ է իրականությունը Բյուզանդիայի վերջնական համաձայնությունը ստանալու հետ կապված, երբ այդ համարվել է Աշոտի գահակալության սկիզբ: Ուստի արձանագրենք, որ խիստ հավանական է այն իրողությունը, որ

884 թ. օգոստոսի 26-ին թագադրության արարողություն, իրոք, տեղի ունեցել է:

884 թ. և 887 թ. թագադրությունների միջև տարբերությունն այն էր, որ առաջին դեպքում կար միայն խալիֆայի համաձայնությունը, իսկ երկրորդ դեպքում՝ արդեն Հայոց թագավորության գոյության համընդհանուր ճանաչումը:

Աշոտ Բագրատունին, 884 թ. նախքան կայսեր համաձայնությունը ստանալը թագադրվելով, կանգնեց մի չափազանց բարդ խնդրի առաջ: Ի՞նչ պետք էր անել, եթե ստացվեր կայսեր համաձայնությունը: Դարձյա՞լ թագադրվել: Բայց չէ՞ որ դա կարող էր հարուցել խալիֆայի դժգոհությունը: Մյուս կողմից, առանց կայսեր հավանությունը ստանալու թագավոր հռչակվելը ևս հղի էր լուրջ հետևանքներով:

Թագադրությունից որոշ ժամանակ անց ստացվեց կայսեր «կամակցությունը»: Գուցե դրա պատճառն այն էր, որ կայսրը չէր կամենում փչացնել հարաբերությունները Հայաստանի և Այսրկովկասի տիրակալի հետ՝ արդեն իսկ գոյություն ունեցող իրողությանը բացասաբար արձագանքելով: Վերջինս մեկընդմիշտ կմղեր Աշոտին դեպի Խալիֆայությունը, որը չէր մտնում Բարսեղ Ա-ի ծրագրերի մեջ:

Վերևում նշեցինք, որ կայսրը Աշոտի գահակալությանը հավանություն կարող էր տալ Տարսոնի պարտությունից հետո միայն: Բայց հատկապես ե՞րբ: Եթե 884 կամ 885 թվականներին, ապա հարց է առաջանում: Պատմիչների մի մասը, երբ Աշոտ Բագրատունու գահակալությունը հաշվարկում է 887 թվականից, անկասկած, նկատի ունի այդ թվականին տեղի ունեցած՝ Աշոտ Բագրատունու թագադրությունը և կամ Բյուզանդիայի կողմից նրան պաշտոնապես թագավոր ճանաչելը: Կստացվի, որ Աշոտ Բագրատունին Բարսեղ Ա կայսեր «կամակցությունը» ստանալուց հետո թագադրությունը ձգձգել է ավելի քան 3 տարի: Սակայն դա խիստ անհավանական է, քանի որ կհարուցեր կայսեր դժգոհությունը: Ուստի կարծում ենք, որ Բարսեղ Ա-ի հավանությունը Աշոտ Ա-ն ստացել է 884 թ. թագադրությունից 2 տարի անց՝ 886 թվականին:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև այնպիսի կարևոր խնդրի, ինչպիսին է թագադրության նոր հանդեսի կազմակերպումը 887

թվականին: Մովսես Դասխուրանցու, Սամվել Անեցու, Վարդան վարդապետի և Ասողիկի տեղեկությունները, որոնք, ինչպես տեսանք, Աշոտ Բագրատունու թագավորության սկիզբ են համարում 887 թվականը, հիմք են տալիս պնդելու, որ, իրոք, թագադրության նոր հանդես կազմակերպվել է: Սամվել Անեցին գրում է, որ Աշոտ Բագրատունին այդ ժամանակ «թագաւորական պսակաւն ճոխաբար թագ կապեալ»[1], որ ուղղակիորեն հաստատում է մեր տեսակետը:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ հնարավոր են հետևյալ եզրակացությունները.

ա. Բարսեղ Ա-ի հավանությունն Աշոտ Բագրատունին ստացել է ոչ թե 884 կամ 885 թվականներին, այլ ավելի ուշ, թերևս 886 թ., որի հետևանքով էլ իրականում նրա թագավորության ճանաչումը և ոչ թե թագադրության արարողությունը սկզբնաղբյուրները տեղադրում են Բարսեղ Ա-ի կենդանության օրոք:

բ. Կայսեր հավանությունը ստանալը խիստ կարևոր էր այդ շրջանի հայկական իրականության մեջ, որով վերջնական ձևակերպում կստանար Հայոց թագավորության վերականգնումը:

գ. Աղբյուրներում 887 թվականն Աշոտի գահակալության սկիզբ համարելը բխում է այդ թվականին տեղի ունեցած կարևոր մի իրադարձությունից, սակայն այդ ժամանակ Բյուզանդիայի կայսրն արդեն Լևոն Զ-ն էր:

դ. Կարելի է համոզված ասել, որ Բարսեղ Ա-ի «կամակցությունը» ստացած Աշոտ Բագրատունին Լևոն Զ-ի կողմից 887 թ. վերջնականապես ճանաչվեց որպես Հայոց թագավոր, ըստ որում՝ խոսքն արդեն ոչ թե «կամակցության», այլ պաշտոնական ճանաչման մասին է:

ե. 887 թ. թագադրության նոր հանդես, ամենայն հավանականությամբ, կազմակերպվել է, որի հետևանքով աղբյուրների մի զգալի մասում Աշոտ Բագրատունու թագավորության սկիզբ է համարվում 887 թվականը:

---

[1] Տե՛ս **Սամուէլ Անեցի**, էջ 113:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն իրողությանը, որ աղբյուրներում հայոց 334 թվականին (885) Աշոտի գահի բարձրանալու հիշատակությունն ամենատարածվածներից է: Վ. Հակոբյանը կարծիք է հայտնել, թե հնարավոր է, որ Գրիգոր Մաշկևորի տեղեկության մեջ ԳՃԼԳ-ն լինի ԳՃԼԴ-ի աղավաղումը, ուստի Աշոտ Բագրատունու գահի բարձրանալն իրականում տեղի է ունեցել 885 թվականին:

Բագրատունյաց թագավորության հիմնադրման թվագրումը 885-ով ծնում է մի շարք անհամապատասխանություններ: Մասնավորապես Աշոտ Ա-ի գահակալության տարիների քանակը, հաշվի առնելով այն, որ նա մահացել է 891 թ. սկզբին, հաշվվում է 6 տարի, իսկ նման հիշատակություն աղբյուրներում իսպառ բացակայում է: Մյուս կողմից, Աշոտի իշխանության տևողությունը 855-885 թթ., ընդունելով, որ 855 թվականը նրա իշխանության առաջին տարին էր, ստացվում է 31 և ոչ թե 30 տարի, մինչդեռ Թովմա Արծրունին տեղեկացնում է, որ նա իշխան և իշխանաց իշխան է եղել 30 տարի: Եթե ընդունենք, որ Աշոտը գահ է բարձրացել 885 թ., ստիպված կլինենք հերքելու աղբյուրների բոլոր տեղեկությունները ու հայտարարելու, որ Աշոտ Բագրատունին իշխան և իշխանաց իշխան է եղել 31 և թագավոր 6 տարի:

Պետք է պարզաբանել նաև այն իրողությանը, որ Հովհաննես Դրասխանակերտցին խալիֆայից Աշոտին թագ բերելը վերագրում է ոստիկան Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանիին (մահ.՝ հիջրայի 269 թ.՝ 882 թ. հուլիսի 25-883 թ. հուլիսի 10)[1], որը անհրաժեշտություն է առաջացնում Աշոտի թագավոր հռչակվելը թվագրել նրա ոստիկանության տարիներով: Սակայն չպետք է մոռանալ այն, որ պատմիչը, չնայած ժամանակակից է այդ իրադարձությանը, իր աշխատությունը գրել է դրանից շուրջ 40 տարի անց, ուստի կարող էր շփոթել իրողությունները: Մասնավորապես նրան հայտնի էր, որ հայ իշխաններն Աշոտին թագադրելու խնդրանքը խալիֆային փոխանցել են ոստիկան Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանիի միջոցով, այսինքն՝ 883 թ. ոչ ուշ: Մինչև թագ ուղարկելը, դատելով մեր հետազոտության արդյունքներից, անցել էր 1 տարուց ավելի, և այդ ընթացքում Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանին

---

[1] Տե՛ս **И. Орбели**, նշվ. աշխ., էջ 58:

մահացել էր: Հավանական է, որ պատմիչը, ելնելով այն բանից, որ խնդրանքը խալիֆային փախանցող ոստիկանը եղել է հենց նա, թագ բերելն էլ նրան է վերագրել՝ «զոր և բերեալ իսկ ոստիկանին Յիսէի»[1]: Ի դեպ, վերջին տեղեկությունը վերաբերում է հենց թագը բերելուն, այլ ոչ թե թագադրությանը: Այդ իսկ պատճառով նշված իրադարձությունը քաղաքական հնչեղություն չի ունեցել և Հայոց թագավորության վերականգնմանը չի նույնացվել, ուստի համապատասխան արձագանք չի գտել աղբյուրներում:

Մյուս կողմից, Բարսեղ Ա-ն Աշոտի թագավորությանը հավանություն կարող էր տալ Տարսոնի պարտությունից հետո, որը տեղի է ունեցել 883 թ. սեպտեմբերի 14-ին: Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանին մահացել էր մինչ այդ: Ըստ որում՝ թագադրվելու համար Բյուզանդիայի հավանությունը ստանալու խիստ հավանական տեսակետը հնարավորություն է տալիս կատարելու ևս մեկ եզրակացություն: Հնարավոր է, որ ճիշտ է Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումն այն մասին, որ թագն Աշոտին բերել է Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանին ամենայն հավանականությամբ 883 թվականին: Սակայն սպասելով կայսեր արձագանքին՝ Աշոտը չի շտապել կազմակերպելու թագադրության հանդեսը և ի լուր աշխարհի հռչակվելու որպես Հայոց թագավոր: Քանի որ Բարսեղ Ա-ն 883 թ. պատերազմ էր մղում Խալիֆայության դեմ, Աշոտ Բագրատունին թագադրության առաջին հանդեսը կազմակերպել է այն ժամանակ, երբ թագը բերող ոստիկանն արդեն մահացել էր:

Ավելին, չի կարելի շրջանցել նաև Հովհաննես Դրասխանակերտցու մեկ այլ տեղեկությունը: Թագադրության նկարագրությունից անմիջապես հետո պատմիչը տեղակացնում է, որ Աշոտ Ա-ն գրավել է շրջակա երկրներն ու հպատակեցրել աբխազաց թագավորին[2]: Ինչպես տեսանք, այդ իրադարձությունը տեղի է ունեցել 888 թվականին: Այսինքն՝ միանշանակ չէ, որ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունը թագադրության արարողության մասին վերաբերում է 884 թ., ավելին, այն կարելի է վերագրել հենց 887 թ. տեղի ունեցածին:

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 443:

[2] Նույն տեղում, էջ 443-444:

Ինչ վերաբերում է այն խնդրին, որ հայկական աղբյուրները տարբեր կերպ են թվագրում Աշոտի գահ բարձրանալը և նրան վերագրում գահակալության տարբեր տարիներ, ապա վերոհիշյալը ցույց է տալիս, որ խնդրո առարկա իրադարձություններից տասնամյակներով և հարյուրամյակներով բաժանված հեղինակները փորձ են կատարել վերարտադրելու դրանք՝ համեմելով սեփական քննության արդյունքներով: Նրանք իրենց հաշվարկները կատարել են՝ սկսած 855 և 862 թվականներից, հաշվել Աշոտի իշխան, իշխանաց իշխան և թագավոր լինելու տարիները, դրանք համադրել նրա մահվան հավանական թվականի հետ և ստացել թվեր, որոնք երբեմն համապատասխանում են, իսկ երբեմն էլ՝ հակասում իրականությանը: Դրան հավելվում են մի քանի ազդակներ ևս: Աշոտը թագ էր ստացել խալիֆայից մինչև 884 թ., հավանաբար անաղմուկ թագադրվել 884 թ., Բարսեղ Ա-ի «կամակցությունը» ստացել դրանից հետո և Լևոն Զ-ի համաձայնությունը ձեռք բերելուն պես պաշտոնապես թագավոր հռչակվել 887 թ.: Այդ ամենի հիման վրա տարբեր հեղինակների կողմից Աշոտին վերագրվել է 4, 5 կամ 7 տարիների թագավորություն:

Անդրադառնանք նաև այն հարցին, որ Աշոտը որպես թագավոր հիշատակվում է նաև 860-70-ական թվականներին: Վ. Հակոբյանի այն դիտարկումը, որ Աշոտը երկրի փաստական տերն էր դարձել 862 թ. սկսած, և հայկական աղբյուրներում հենց այդ թվականից էլ դիտարկվում է Հայոց թագավորության վերականգնումը, միանգամայն ճիշտ և ընդունելի է: Սակայն իրավիճակի նման ընկալումը չէր կարող գոյություն ունենալ նաև վրացական միջավայրում: Վերևում տեսանք, որ Աշոտը Հայոց թագավոր է հիշատակված նախքան 870 թ. տեղի ունեցած դեպքերի ժամանակ (կամ հենց 870 թ.): Այս առումով լիովին ընդունելի է Ա. Տեր-Ղևոնդյանի այն տեսակետը, թե Աշոտը հայ իշխանների կողմից թագավոր է հռչակվել 860-ական թվականներին[1], և կամ այն, որ ինչպես համոզված է Վ. Հակոբյանը, Աշոտ Բագրատունին, հռչակվելով իշխանաց իշխան, դարձել է երկրի տերն ու ժողովրդի ընկալման մեջ՝ նաև թագավոր:

---

[1] Տե՛ս А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 235-236:

***Ամփոփելով կատարված քննությունը***՝ կարող ենք նշել, որ խալիֆան Աշոտ Բագրատունուն թագ է ուղարկել, հավանաբար 883 թվականին: Խալիֆայության դեմ պատերազմ վարող Բյուզանդիայի կայսր Բարսեղ Ա-ի համաձայնությանը սպասելով՝ Աշոտը թագադրության անշուք հանդես է կազմակերպել 884 թ. օգոստոսի 26-ին: Սակայն այդ հանդեսն ու տեղի ունեցածի քաղաքական նշանակությունը պատմիչները, Բյուզանդիայի համաձայնության բացակայության պատճառով աննշան համարելով, այդ թվականը որպես նրա թագավորության սկիզբ չեն հիշատակել:

Աշոտ Ա-ն այնուհետև թագավորել է մինչև 891 թ. սկիզբը: Սրա հետ է թերևս կապված այն իրողությունը, որ հայկական մի շարք աղբյուրներում Աշոտ Ա-ին վերագրված է 7 տարվա թագավորություն: Քանի որ Աշոտը նախքան թագավորելը կառավարել է երկիրը 25 տարի որպես իշխանաց իշխան, ապա գահի բարձրանալու թվականը կարող ենք ճշտել՝ իշխանաց իշխան նշանակվելու 862 թվականից հաշվելով 25 տարի և կամ մահվան 891 թվականից հանելով թագավորության 4 կամ 5 տարիները՝ հաշվի առնելով նաև պատմիչների կատարած հաշվարկը: Ստացվում է 887 թվականը: Այդ ժամանակ Աշոտի գահակալությունը պաշտոնական ձևակերպում ստացավ Բյուզանդիայի նոր կայսեր՝ Լևոն Զ-ի կողմից, և կազմակերպվեց Աշոտ Բագրատունու թագադրության հանդեսը:

Աշոտի իշխանության և թագավորության տարիների վերաբերյալ հաղորդած տեղեկությունների առումով կարևորագույն սկզբնաղբյուրը Թովմա Արծրունու Պատմությունն է, որտեղ հստակորեն արձանագրված են հետևյալ իրողությունները. Աշոտ Բագրատունին Հայոց իշխան է եղել 5 տարի (857-862), իշխանաց իշխան՝ 25 տարի (862-887) և թագավոր՝ 4 տարի (887-891):

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Աշոտ Ա Բագրատունին Հայոց պատմության ամենաինքնատիպ գահակալներից մեկն է, գործիչ, որի խելամիտ գործունեության շնորհիվ Հայաստանը հնարավորություն ստացավ ինչպես անվնաս անցնելու IX դ. երկրորդ կեսի վտանգավոր իրադարձությունների միջով, այնպես էլ հզորանալու և վերականգնելու երկրի քաղաքական անկախությունը:

Աշոտ Բագրատունու թագադրության թվականի և գահակալության տարիների վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել: Այդ տեղեկություններում միանշանակություն չկա: Այդ իսկ պատճառով հետազոտողները, քննության առնելով խնդիրը, ամենատարբեր եզրակացությունների են հանգել:

Մեր քննությունը ցույց է տալիս, որ գործ ունենք անչափ խճճված հիմնահարցերի հետ: Աշոտ Ա-ն եղել է իմաստուն պետական և քաղաքական գործիչ, և նրա օրոք տեղի ունեցածը հասկանալու համար անհրաժեշտ է խորամուխ լինել նաև նրա քաղաքական նպատակների և ծրագրերի մեջ:

Ստանձնելով հայոց սպարապետի պաշտոնը Բուղայի արշավանքի հետևանքով ստեղծված ավերի ու շփոթի պայմաններում՝ Աշոտ Բագրատունին կարճ ժամանակ անց կարողացավ շահել խալիֆայի վստահությունը և 862 թ. հռչակվեց որպես Հայաստանի և այսրկովկասյան երկրների իշխանաց իշխան: 25 տարի շարունակ նա վարեց իշխանաց իշխանի պաշտոնը՝ համախմբելով իշխաններին և հզորացնելով պետությունը:

Աշոտ Բագրատունու հաջողությունները հայ իշխանների մեջ ծնեցին Հայոց թագավորության վերականգնման գաղափարը, և նրանք ոստիկանի միջոցով դիմեցին խալիֆային: Վերջինս համաձայնեց և 883 թ. թագ ու թագավորական հանդերձներ ուղարկեց Աշոտին:

Հայաստանում նոր իրավիճակ ստեղծվեց, և Աշոտը նախքան թագադրվելը փորձեց ստանալ նաև դարաշրջանի մյուս հզոր պետության՝ Բյուզանդական կայսրության հավանությունը:

Հայոց խորագետ թագավորը կարճ թագավորեց, սակայն դեռևս իշխանաց իշխան եղած տարիներին նա օժտված էր թագավորական իշխանությամբ, և նրան պակասում էր միայն թագը: Իսկ թագն այնպիսի արժեք չուներ Աշոտ Բագրատունու համար, որպեսզի դրա պատճառով վտանգի ենթարկեր երկար տարիների ստեղծածը: Ուստի համբերատար սպասում էր դեպքերի զարգացմանը և ի լուր աշխարհի թագավոր հռչակվեց միայն այն բանից հետո, երբ Խալիֆայությունից բացի նրա թագավորությանը հավանություն տվեց նաև Բյուզանդիան:

887 թվականն էր: Աշոտ Ա-ն թագավորեց 4 տարի՝ մինչև 891 թ. սկիզբը:

# ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(ընդհանուր պատկեր)

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 855. | | | 32[1] | | | | | |
| 856. | | | 1. | | | | | |
| 857. | | 30[2] | 2. | | | | | |
| 858. | | 1. | 3. | | | | | |
| 859. | | 2. | 4. | | | | | |
| 860. | | 3. | 5. | | | | | |
| 861. | | 4. | 6. | | | | | |
| 862. | 25[3] | 5. | 7. | | | | | |
| 863. | 1. | 6. | 8. | | | | | |
| 864. | 2. | 7. | 9. | | | | | |
| 865. | 3. | 8. | 10. | | | | | |
| 866. | 4. | 9. | 11. | | | | | |
| 867. | 5. | 10. | 12. | | | | | |
| 868. | 6. | 11. | 13. | | | | | |
| 869. | 7. | 12. | 14. | | | | | |
| 870. | 8. | 13. | 15. | | | | | |
| 871. | 9. | 14. | 16. | | | | | |
| 872. | 10. | 15. | 17. | | | | | |
| 873. | 11. | 16. | 18. | | | | | |
| 874. | 12. | 17. | 19. | | | | | |
| 875. | 13. | 18. | 20. | 22[4] | | | | |
| 876. | 14. | 19. | 21. | 1. | | | | |
| 877. | 15. | 20. | 22. | 2. | | | | |
| 878. | 16. | 21. | 23. | 3. | | | | |
| 879. | 17. | 22. | 24. | 4. | | | | |
| 880. | 18. | 23. | 25. | 5. | | | | |

---

[1] Աշոտ Բագրատունու կառավարման սկիզբը և տարիներն ըստ Ասողիկի:

[2] Աշոտ Բագրատունու կառավարման սկիզբը և տարիներն ըստ Թովմա Արծրունու:

[3] Աշոտ Բագրատունու՝ իշխանաց իշխան եղած շրջանի սկիզբը և տարիներն ըստ հայկական աղբյուրների:

[4] Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի հայրապետության սկիզբը և տարիներն ըստ Ասողիկի:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 881. | 19. | 24. | 26. | 6. | | | | |
| 882. | 20. | 25. | 27. | 7. | | | | |
| 883. | 21. | 26. | 28. | 8. | | | | |
| 884. | 22. | 27. | 29. | 9. | 884[1] | | | |
| 885. | 23. | 28. | 30. | 10. | 1. | 885[2] | | |
| 886. | 24. | 29. | 31. | 11. | 2. | 1. | 886[3] | |
| 887. | 25. | 30. | 32. | 12. | 3. | 2. | 1. | 887[4] |
| 888. | | | | 13. | 4. | 3. | 2. | 1. |
| 889. | | | | 14. | 5. | 4. | 3. | 2. |
| 890. | | | | 15. | 6. | 5. | 4. | 3. |
| 891. †[5] | | | | 16. | 7. | 6. | 5. | 4. |
| 892. | | | | 17. | | | | |
| 893. | | | | 18. | | | | |
| 894. | | | | 19. | | | | |
| 895. | | | | 20. | | | | |
| 896. | | | | 21. | | | | |
| 897. | | | | 22. | | | | |

[1] Աշոտ Բագրատունու գահակալության սկիզբն ըստ Գրիգոր Մաշկևորի:
[2] Աշոտ Բագրատունու գահակալության սկիզբն ըստ որոշ հետազոտողների:
[3] Աշոտ Բագրատունու գահակալության սկիզբը և տարիներն ըստ Ն. Ադոնցի հաշվարկների:
[4] Աշոտ Բագրատունու գահակալության սկիզբը և տարիներն ըստ Թովմա Արծրունու:
[5] Աշոտ Բագրատունու մահվան թվականը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Ա. Աղբյուրներ


1. Անանուն Զրուցագիր, Պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», Թ. հատոր, Թ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008:
2. Անանուն Զրուցագիր՝ կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանոթագրութիւնները Վ. Առաքելեանի, Ե., 2011:
3. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985:
4. «Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց», աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961:
5. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988:
6. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862:
7. «Մայր ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Այնթափյան, Ե., 1965:
8. «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դարեր)», հ. I, Ե., 1951, հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1956:
9. Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Ե., 1983:
10. «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867:
11. «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց»: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860:
12. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, բնագիրը Վ. Առաքելյանի, Ե., 1983:
13. «Յայսմաւուրք», ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի, ի Կոստանդնուպօլիս, 1834:
14. «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007:
15. «Յիշատակարանք ձեռագրաց», կազմ. Գարեգին Ա Կաթողիկոս, հ. Ա (Ե. դարից մինչեւ 1259 թ.), 48 նմանահանութիւններով, Անթիլիաս, 1951:

16. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց»,- «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:
17. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», բնագիրը Մ. Էմինի, 1996:
18. «Պատմութիւն Անանուն Զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի)», թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի ["История Анонимного Повествователя (Псевдо-Шапух Багратуни)"], Ե., 1971:
19. «Զամբռ, Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, եւ իւրոց շրջակայից վանօրէիցն, շարագրեցեալ Սիմէօնէ Կաթուղիկոսէ», Վաղարշապատ, 1873:
20. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, առաջաբանը՝ Կ. Մաթեւոսեանի, Ե., 2011:
21. «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861:
22. Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական,-«Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Ե., 2011:
23. «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյան, Հ. Մկրտումյան,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, թիվ 9:
24. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանո թ. Հ. Բարթիկյանի, Ե., 1970:
25. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981:
26. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե. 2005:
27. Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, пер. М. Лордкипанидзе, Тб., 1979.
28. "Chronique de Michel le Syrien patriarche Jacobite D'Antioche (1166-1199)", Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905.

## Բ. Ուսումնասիրություններ


29. Աղոնց Ն., Երկեր, հ. Ա, Ե., 2006:
30. Աղոնց Ն., Երկեր, հ. Ե, Ե., 2012:
31. Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869:
32. Աճառյան Հ., Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ), Ե., 2004:
33. Գրիգորյան Գ., Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Ե., 1983:
34. Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-908), Ե., 2011:
35. Ինճիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշ-խարհի, հ. Բ, Վենետիկ, 1835:
36. Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1967:
37. «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը ծանօթութիւններով», գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէն թարգմանեց Հ. Մ. Հապոզեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1913:
38. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ. III, Ե., 1976:
39. Հարությունյան Հ., Հայաստանը IX-XI դարերում, Ե. 1959:
40. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, Ե., 1957:
41. Ղափաղարյան Կ., Հայկական գրի սկզբնական տեսակները (հնագրա-կան-բանասիրական ուսումնասիրություն), Ե., 1939:
42. Մաքևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990 :
43. Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, Ե., 1978:
44. Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հե-տազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009:
45. Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785:
46. Պալասանեան Ստ., Պատմութիւն Հայոց (սկզբից մինչեւ մեր օրերը), Թիֆլիս, 1902:
47. Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, հ. I, Ե., 1939:
48. Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Ե., 1969:

49. Վարդանյան Վ., Արծրունիները հայոց պատմության մեջ, Ե., 2002:
50. Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1913:
51. Ֆասմէր Ռ., Ժամանակագրութիւն Հայաստանի ոստիկաններու առաջին Աբբասեանց օրով, Վիեննա, 1933:
52. Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987.
53. Аракелян Б., Гарни, т. I, Е., 1951.
54. Васильев А., Политические отношения Византии и арабов за время Македонской династии (867-959),-“Записки историко-филологического факультета императорского С.-Петербургского университета”, часть LXVI, С.-Петербург, 1902.
55. Грен А., Династия Багратидов в Армении,-“Журнал министерства народного просвещения”, часть CCXC, С.-Петербург, 1893, ноябрь.
56. История Византии в трех томах, т. II, М., 1967.
57. Манандян Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954.
58. Орбели И., Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления, М.-Л., 1961.
59. Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, Е., 1977.
60. Успенский Ф., История Византийской империи, т. 3, М., 2005.
61. Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988.
62. Akulian A., Einverleibung armenischer Territorien durch Byzanz im XI. Jahrhundert, Grüningen, 1912.
63. Brosset M., Histoire de la Georgie, I-re partie, S.-Petersbourg., 1849.
64. Daghbaschean H., Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893.
65. Dulaurier Éd., Recherches sur la Chronologie Arménienne, Technique et Historique, Ouvrage formant les Prolégomènes de la Collection Intitulée Bibliothèque Historique Arménienne, tome I, Paris, 1859.
66. Ghazarian M., Armenien unter der arabishchen Herrschaft bis zur Enstehung des Bagratidenreiches, Zeitschrift fuer armenische Philologie, Marburg, 1903.
67. Laurent J., L'Arménie entre Byzance et I Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919, R. Grousset, Histoire de l’Arménie. Des origines à 1071, Paris, 1947.
68. Ostrogorsky G., Histoire de l’Etat Byzantin, Paris, 1956.

69. Saint-Martin J., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1818.
70. Ter-Mikelian A., Die armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen, vom IV. bis zum XIII. Jahrhundert, Leipzig, 1892.
71. The Cambridge History of Byzantine Empire, c. 500-1492, Cambridge, 2008.
72. The Cambridge Medieval History, vol. IV. The Byzantine Empire, p. I, Cambridge, 1966.
73. Thopdschian H., Die inneren Zustände von Armenien unter Ašot I (ausgenommen die Geschichte der armenischen Naxararowt̔iwns und der armenischen Kirche), Inaugural-Dissertation, Berlin, 1904.
74. Thopdschian H., Politische und Kirchengeschichte Armeniens unter Asot I und Smbat I,-“Mitteilungen des Seminars fur Orientalische Sprachen”, Westasiatische Abt. 8, 1905.

## Գ. Հոդվածներ

75. Աբրահամյան Ա., Ներկա թվականի սկզբնավորությունը ըստ հայ տոմարագետների հաշվումների,-«ՊԲՀ», 1970, թիվ 3:
76. Առաքելյան Բ., Հայկական պետականության վերականգնումը IX դարի վերջերին,-«ՊԲՀ», 1971, թիվ 4:
77. Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,-«Լրաբեր (հաս. գիտ)», 1996, թիվ 1:
78. Բիթարյան Մ., Արմինիայի արաբ ոստիկանների ժամանակագրությունը,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, թիվ 6:
79. Գրիգորյան Մ., Բագրատունյաց թագավորության սկզբնավորման թվագրության շուրջ,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 2012, թիվ 2-3:
80. Եղիազարեան Ա., Հայ-ափխազական պատերազմները Թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջքի կիւրոպաղատութիւնը,-«Բազմավէպ», Վենետիկ, Ս. Ղազար, 2009:
81. Երեմյան Ս., Լիպարիտ զորավարը և նրա նախորդները,-«Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Ե., 1947, թիվ 2:
82. Թումանյան Բ., Տոմարական հաշվումներ,-«Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1964, թիվ 5:

83. Խաչիկյան Լ., Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները,-«Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1949, թիվ 2:

84. Մաթևոսյան Ռ., Բագրատունի թագավորների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ II) բյուզանդական թագը,-«ՊԲՀ», 2001, թիվ 1:

85. Յուզբաշյան Կ., «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից,-«ՊԲՀ», 1975, թիվ 1:

86. Նալբանդյան Հ., Արաբացի ոստիկանները Հայաստանում,-«Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1956, թիվ 8:

87. Շահինեան Ա., Հայոց վերջին կայսրութեան ծնունդը արաբական գերիշխանության պայմաններում,-«Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԼԲ, Պէյրութ, 2012:

88. Տեր-Ղևոնդյան Ա., Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը,-«ՊԲՀ», 1977, թիվ 1:

89. Տեր-Ղևոնդյան Ա., Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-10-րդ դարերում,-«Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1957, թիվ 10:

90. Տեր-Ղևոնդյան Ա., «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում,-«ՊԲՀ», 1964, թիվ 2:

91. Քալանթարյան Ա., Ղաֆադարյան Կ., Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ժամանակագրության որոշ հարցեր,-«ՊԲՀ», 1990, թիվ 1:

92. Еремян С., Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке.-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1971, թիվ 3:

93. Крачковская В., Печать Багратида Ашота с арабской надписью,-“Краткие сообщения о докладах и полевых исследованиях института истории материальной культуры”, XII, М.-Л., 1946.

94. Крымский А., Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Шеки,-Сборник “Памяти академика Н. Я. Марра (1864-1934)”, М.-Л., 1938.

95. Меликсет-Беков Л., Новооткрытая надпись на Севане от 874 г.,-“Сборник памяти акад. Н.Я. Марра”, М.-Л., 1939.

96. Тер-Аветисян С., О раскопках в Карсе и новооткрытой армянской надписи IX в.,-“Известия Кавказского историко-археологического института в Тифлисе”, т. III, Тифлис, 1925.
97. Canard M., Arminiya,-“The Encyclopaedia of Islam”, new edition, vol. I, A-B, Leiden, 1986.
98. Hakopian V., La date de l’avènement d’Ašot, premier roi Bagratide, “Revue des études arméniennes”, II, 1965.
99. Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen geographen,-«Հանդէս ամսօրեայ», 1915, թիվ 1-12:
100. Mlaker K., Zur chronologie Ašots I,-«Հանդէս ամսօրեայ», 1927, թիվ 11-12:

## Բովանդակություն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ........................................................................3

Գլուխ Ա

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ...................6

Գլուխ Բ

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..........................................................30

Գլուխ Գ

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ .......................................42

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ .............................................................67

Հավելված

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ......................................................... 69

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ............................................................71

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ԱՇՈՏ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ

## (թագաղրության թվականը և գահակալության տարիները)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի

Հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 5:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1